

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ

Ժամանակագրությունը կազմող՝ Հայոց ցեղասպանության քանգարան-ինստիտուտի գիտական աշխատող Ժ. Նուրիջանյանը լայնորեն օգտվելով հրապարակի վրա եղած պատմագիտական, հուշային գրականությունից և բազմաթիվ արխիվային վավերագրերի տվյալներից, ի մի է բերել սկզբնաղբյուրների վկայությունները Հայոց ցեղասպանության մասին և փորձ է կատարել ստեղծել կոտ մի ժամանակագրություն, որն իր մեջ է ընդգրկում 1915-1923թթ. իրադարձությունները:

Ստորև հրապարակվում է ժամանակագրություն առաջին՝ 1915 թվականի հունվար-մայիս ամիսների դեպքերին նվիրված հատվածը:

Լ. Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

1915

ՀՈՒՆՎԱՐ

1 հունվարի

• Թուրքիայում Գերմանիայի դեսպան Վանգենհայմը, պատասխանելով Պոլսի հայոց Ջավեն պատրիարքի՝ Նոր տարվա շնորհավորանքներին ու հայ ժողովրդի նկատմամբ նրա բարյացակամ վերաբերմունքը հայցող խնդրանքին, հայտարարում է. «Զանի դեռ Գերմանիան Թուրքիայի դաշնակիցն է, ոչ մի քրիստոնյա չպիտի վախենա: Վստահ եղեք, ոչ մի հայի քիթ չի արյունոտվի ո՛չ այստեղ, ո՛չ էլ գավառներում»:¹

• «Кавказское слово» թերթում տեղ գտած «Կրկին, ինչպես առաջ...» թղթակցությունում ասվում է. «Նորից ողջ հայկական հողը դարձել է արյունահեղության և ամայացման ասպարեզ, կրկին տասնյակ հազարավոր հայեր, սոված և մրսած, ձգվում են ձյունոտ բարձունքներով դեպի նոր երկրամասեր: Մահը և խելագարությունը հնձում են նրանց շարքերը: Մարսափն ու հուսահատությունը տանում են նրանց առաջ և

առաջ: Երեխաները սառչում են, ծերերն ընկնում, կանայք իրենց նետում են անդունդները...»:²

• Ռուսական զործող բանակի առաջավոր դիրքերից «Դոկտոր Է.» ստորագրությամբ Թիֆլիսի քաղաքապետ Խատիսովին հղած մամակում նշված է. «Սարսափները, որոնց ականատես ենք լինում առաջավոր գծում այնքան ցնցող են, որ ցավատանջ հոգիդ ուզում է ամբողջ աշխարհով մեկ ճչալ: Խոսքը ոչ թե պատերազմի սարսափների մասին է, այլ տարաբախտ հայ ժողովրդի ողբերգության»: Նամակագիրը դիմում է Խատիսովին՝ խնդրելով բնակչությանը տեղյակ պահել հատկապես քրդերի զազանության մասին: Նամակում նշվում է նաև, որ մի շարք հայկական գյուղեր, ինչպես Մոլլա Մուլեյմանը, ամբողջովին ոչնչացված են: «Սարսափելի պատկեր է. դիակներ են, դիակներ, դիակներ... տղամարդիկ, կանայք, կրծքի երեխաներ՝ խեղված և զազանաբար այլանդակված»:³

2 հունվարի

• Ռուսական զորքերը հեռանում են Պարսկաստանի Ուրմիա քաղաքից, և անմիջապես սկսվում է հայերի և ասորիների աքաղաղությունը Ուրմիայի, Մալմաստի և Հեքիարի շրջաններից դեպի Նոր Ջուղա: Նրանցից շատերը սպանվում են իրենց հալածող թուրքական զորքերի և քրդական զինված հրոսակախմբերի կողմից, որոնք քանդում են նրանց գյուղերի մեծ մասը: Ինչպես նշում է Թեհրանում ամերիկյան դեսպանորդ Ջ. Բալդվինը իր հունիսի 23-ի տեղեկագրում՝ մինչև ռուսական զորքի վերադարձը (մայիսի 24-ը) սպանվել և հիվանդություններից մահացել են Ուրմիայի 33000 քրիստոնյաներից 5000-ը:

«Քրդերի օգտագործումը,- նշվում է տեղեկագրում,- մտնում էր թուրքական արշավանքի ծրագրի մեջ և ղեկավարվում էր բանակի սպաների և հյուպատոսի կողմից... Թուրքական զորքերի հրամանատար Ջևդեթ փաշայի գլխավորությամբ Մալմաստի Նաֆրդիվան գյուղում սպանվել են 750 տարբեր տարիքի տղամարդիկ՝ շատերը տանջամահ արված և մասնատված»:⁴

• Հայտնի իրավաբան, բանասեր, հրապարակախոս, Դոնի հայերի Հայկական բարեգործական միության նախագահ, Նոր-Նախիջևանի պատգամավոր Գրիգոր Չալոուշյանը Մոսկվայի քաղաքագլուխ Չելնոկովին գրում է. «Իմ ժողովրդին այժմ թուրքերը գնդակահարում, տանջում և ոչնչացնում են ոչ միայն Թուրքիայում, այլև Պարսկաստանում... Չեզ հայտնի սարսափները չնչին բան են մեր տանջանքների համեմատությամբ... Մեզ մոտ տեղի է ունենում ամբողջական ոչնչացում: Եղել են նաև առաջին հայացքից անհնարին թվացող դեպքեր՝ Ռուսաստանի տարածքում թուրք զերիներ տեղափոխող վագոններում գտել են խեղդված հայերի: Թուրք զինվորներն այստեղ՝ Ռուսաստանում սպանում են հայ զինվորներին. կարող եք պատկերացնել, թե ի՞նչ է կատարվում այնտեղ՝ սարսափի երկրում»:⁵

3 հունվարի

• «Кавказское слово» թերթի հունվարի 3-ի թիվ 2-ում «Նորից փախստականներ» հոդվածում խոսվում է Սարիղամիշի և Արդահանի վրա թուրքերի հարձակման, նրանց գլխովին ջախջախման և դրա հետևանքով առաջացած համատարած տազնապի ու վախի մասին: Նշվում է, որ Թուրքիայի հայազգի քաղաքացիները, կոտորածներից սարսափած, հազարներով

փախչում են դեպի Ռուսաստան: «Իգդիրը և մերձակայքը լեփ-լեցուն են փախստականներով, որոնք մեծ խմբերով գալիս են Ղարաքիլիսայից, Բայազետից, Դուտախից և շրջակա գյուղերից: Նրանց թիվն արդեն մի քանի տասնյակ հազարի է հասնում, բայց էլի գալիս են նորանոր խմբերով: Նրանք սոված են, մերկ, պատառուտված շորերով ու մրսած: Խառնաշփոթի և փախուստի ժամանակ նրանք իրենց հետ չեն վերցրել համարյա ոչինչ... Չոնկել են շատերը, հատկապես կանայք և երեխաները...

Իգդիրը և շրջակա գյուղերը վերածվել են իսկական «հիվանդանոցների», որտեղ չկան բուժողներ և բոլորը թողնված են բախտի քմահաճությին»:⁶

4 հունվարի

• «Кавказ» թերթի թիվ 3-ում թղթակից Մ. Ռիկը հայտնում է, որ իր կյանքում առաջին անգամ տեսնում է ամայացման սոսկալի մի պատկեր պարսկական «ժոտորով գյուղում, որտեղ գտնվում էր իրենց ներկայացուցչությունը: Խոտորվել մի մեծ գյուղ էր, որն ուներ 500 ընտանիք և այժմ լրիվ ամայացել է: Պատկերն ամբողջանում է չորս զառամյալ ծերունիների լացով, որոնք մեզնից խնդրում էին փրկել իրենց»:⁷

6 հունվարի

• Մ. Հարությունովը Կովկասյան Բարեգործական ընկերությանն ուղարկած հեռագրում հաղորդում է. «Ամեն օր Թուրքիայից Կարս ու Կարսի մարզ են հասնում փախստականների նոր խմբեր, որոնց մեջ կան բազմաթիվ վիրավորներ: Մարտական գործողությունների դեպի մեր սահմանը տեղափոխումից հետո այն գյուղացիները, որոնք չէին հասցրել փախչել, կոտորվել են: Մարգում կան 50000 փախստականներ: Կարսում ապաստանել են 6000-ը: Հիմա ուժեղացել է շարժումը Կադգվանի կողմից, վիճակը թղթերգական է...»:⁸

11 հունվարի

• «The New York Times»-ը գրում է, որ «London Daily Telegraph»-ի մի հաղորդագրության համաձայն Թալեաթը Պոլսի հունական պատրիարքին ասել է. «Թուրքիայում քրիստոնյաների համար տեղ չկա և լավ կլինի, եթե [պատրիարքը] խորհուրդ տա նրանց ազատել երկիրը, որը պիտի դառնա մուսուլման վտարանդիների օթևանը»:⁹

12 հունվարի

• Վանի նահանգի Ավշարիկ գյուղում տեղի է ունենում 107 հայերի ջարդը: Մկզբում թուրք ժանդարմները հավաքում են գյուղի բոլոր բնակիչներին ու նրանց աչքերի առաջ զնդակահարում երկու հոգու, իսկ մյուսներին տանում անհայտ ուղղությամբ և սպանում:¹⁰

13 հունվարի

• "Кавказская Мысль" թերթն իր հունվարի 20-ի համարում գրում է. «Պետական դումայի անդամ Ա. Ֆ. Կերենսկին հունվարի 13-ին ազատունտեսական ընկերությունում կատարած իր զեկուցման մեջ ասաց. «Երբ սկսվեց թուրքական հարձակումը և տեղափոխվեց ռուսական տարածք, դեպի հյուսիս ձգվեցին փախստականների գետերը... Դա գաղթ չէ, ո՛չ, դա մի ողջ ժողովրդի մեծ վերջն է...»:

Կերենսկին ինքն է տեսել, թե ինչպես պատառոտված շորերով, քաղցած ու հյուծված հազարավոր մարդիկ հուսահատ քայլում էին՝ ճանապարհի եզրերին թողնելով ծծկեր երեխաների սառած դիակներ»:¹¹

• «Քրիստոնյաները մեծ վտանգի առջև» խորագրով տեղեկատվության մեջ «The New York Times»-ը գրում է, որ համաձայն «London Morning Post»-ին հղած մի հաղորդագրության, քրիստոնյաների համար չափազանց վտանգավոր պայմաններ են ստեղծվել Թուրքիայի մույնիսկ մեծ քաղաքներում: Թալեաթը հունական պատրիարքարանի խորհրդատուին ասել է, որ այսուհետև Թուրքիան օթևան պիտի լինի միայն թուրքերի համար:¹²

18 հունվարի

• Կոստանդնուպոլսից Վիեննա ուղարկված ավստրոհունգարական մի լրտեսագրում նշվում է. «Հայկական տարբեր վիլայեթներից պատրիարքարանը լուրեր է ստացել, որ թուրքերի և հայերի միջև հին հակամարտությունը դրսևորվում է վերջիններիս դեմ ուղղված ամենատարբեր չարագործություններով: Մեծ ջարդեր դեռ ոչ մի տեղ չեն եղել, բայց տարբեր բնակավայրերում, ինչպես երևում է, սպանել են ունկոր հայերին և կողոպտել նրանց տները: Այս դեպքում բոլորից շատ անհանգստացնում է այն, որ իշխանությունները ձեռքերը ծալած են մայել ույդ ռճրագործություններին: Հայերը հուսով էին, թե Էնվերի հայտնվելը Կովկասում վերջ կտար այդ անկարգություններին, բայց հուսախաբվեցին...

Թուրքիայի համար այսօր ավելի քան երբևէ կարևոր է հայերի լույալ վերաբերմունքը: Նա հայերին ծանր փորձության է ենթարկում՝ նրանց չպաշտպանելով կյանքի ու սեփականության վրա կատարվող հարձակումներից, մանավանդ, որ Թուրքիայի և Ռուսաստանի միջև պայքարում հայերն ազնվաբար առաջինի կողմն են կանգնել: Նա պետք է հաշվի առնի, որ Թուրքիայի կովկասյան բանակում համեմատաբար ավելի շատ հայեր կան»:¹³

20 հունվարի

• "Русские Ведомости" թերթի հունվարի 24-ի համարում տպագրված Թիֆլիսի ռուսիկանապետի հրամանում ասվում է՝ այն մասին, որ քրիստոնյա փախստականների ներքոսքը Թուրքիայից ու Պարսկաստանից չի դադարում: «Ես տեսել եմ նրանց՝ սոված և ուժասպառ, հազիվ ծածկված ցնցոտիներով, որոնք փողոցներում մուրացկանություն էին անում: Նրանց մեջ շատ էին հիվանդները»: Նա պրիստավների ուշադրությունն է հրավիրում գաղթականների այդ հոծ խմբերի վրա՝ հուսալով, որ նրանք այդ մարդկանց կօգնեն սննդով, կացարանով ու ցույց կտան բժշկական օգնություն:¹⁴

26 հունվարի

• Կոստանդնուպոլսից Ավստրո-Հունգարիայի դիվանագետները հաղորդում են Վիեննա. «Շատ հաճախ հայ զինվորներին ուղարկում են ռազմաճակատի առաջին գիծ, որպեսզի նրանք այնտեղ սպանվեն: Քրդերը նորից սկսել են առանձին գործողությունների միջոցով կոտորել հայ գյուղացիներին, որպեսզի կասկած չառաջանա, թե ընդհանուր կոտորած է տեղի ունենում»:¹⁵

• Կոստանդնուպոլսում գերմաններն լեզվով հրատարակվող «Osmanischer Lojd» թերթում տպագրվում է Թուրքիայի ռազմական նախարար Էնվեր փաշայի պատասխանը Կոնիայի հայկական եկեղեցու առաջնորդի՝ հայ

համայնքի անունից հղած ուղերձին: Շնորհակալություն հայտնելով ուղերձի համար՝ էնվերը գրում է. «Օսմանյան բանակի հայ զինվորները խղճի մտքը են կատարում իրենց պարտքը պատերազմի թատերաբեմում, և ես վկայում եմ, որ դա ես անձամբ եմ տեսել:

Ձեզանից խնդրում եմ հայոց ազգին, որի՝ կայսերական կառավարության հանդեպ ունեցած անձնվիրությունը հայտնի է, հայտնել իմ գոհունակության և երախտագիտության արտահայտությունը»:¹⁶

27 հունվարի

• Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սազոնովը, հանդես գալով Պետական դումայում, հայտարարում է. «Կայսերական կառավարությունը վերջին տարիներին անշեղորեն ձգտել է թեթևացնել թուրքահայերի ծանր վիճակը՝ ղեկավարվելով ինչպես ռուսական քաղաքականության անշահախնդիր ավանդույթներով, այնպես և՛ մեր պետական շահերով: Երբ Բեռլինում համոզվեցին Հայաստանում բարեփոխումների հասնելու մեր անշեղ ձգտման մեջ, գերմանական դիվանագիտությունը պատրաստակամությամբ հայտնեց կիսել մեր ջանքերը՝ կյանքում դրանց ճշմարտացի իրականացումն ապգելակելու... մտադրությամբ: 1914թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագիրը համարվում է պատմական, որի ստորագրությամբ Բ. Դուռը ճանաչեց մեր բացառիկ դերը հայկական հարցում: Պատերազմի ավարտից հետո այն կօգտագործվի կայսերական կառավարության կողմից հայ բնակչության համար բարենպաստ նպատակներով...»:¹⁷

28 հունվարի

• Կոստանդնուպոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինին զեկուցում է Վիեննա. «Գաղտնի աղբյուրներից իմացել եմ, որ կառավարությունը չի վստահում հայերին, և որ Թալեաթ բեյը վերջերս հայ պատրիարքին՝ ուշադրությունը հրավիրել է հայերի հնարավոր հակակառավարական քարոզչության հետևանքների վրա»:¹⁸

• Թուրք ժանդարմները Մշո Ցրոնք գյուղում կռիվ սարքելով 70 մարդ են սպանում և գյուղն ավերում:¹⁹

29 հունվարի

• Ռուսաստանի Պետական դուման ընդունում է «Արտաքին գործերի նախարարությանը կից՝ գերմանացիների, ավստրիացիների և թուրքերի կողմից միջազգային իրավունքի, պատերազմ վարելու կանոնների ու սովորույթների խախտումները քննելու և պետությանը, հասարակական հաստատություններին, մասնավոր ընկերություններին ու անձանց հասցված վնասներն ու կորուստները ճշտելու համար քննիչ մի հանձնաժողով ստեղծելու մասին» որոշումը:²⁰

1915

ՓԵՏՐՎԱՐ

2 փետրվարի

• Գերմանիայի դեսպան Վանզենհայմը ռախսկանցիներ Բեթման Հոլվեգին գրում է, որ թուրքական կառավարությունը չի կամենում շարունակել հայկական բարենորոգումների ծրագիրը, և որ պատերազմում Թուրքիայի

պարտություններ կրելու դեպքում հայ ազգաբնակչությունը կկտվի հաղթողի կողմից:²¹

4 փետրվարի

• Ձմյուռնիայի ամերիկյան գլխավոր հյուպատոս Ջորջ Հորթոնը պետքարտուղարին տեղեկացնում է, որ թուրքական անօրեն խմբակները մի քանի անգամ հարձակվել են ու ահաբեկել տարածքի քրիստոնյաներին: Օրինակ, բրիտանահպատակ պ-րն. Արրահամի տան վրա հարձակվել են մոտ 15 հոգի, այրել են տունը և ծանրորեն վիրավորել երկու երեխաներին:²²

9 փետրվարի

• Բիթլիսի նահանգի Խիզանի գավառակի Եղեգիս, Բերկրի, Արբենց, Հոկոձու, Ուտիք, Ծկուր և Թացու հայկական գյուղերը, Խիզանի կառավարչի (մյուղի) և սեյիդ Ալիի որդի Հաջի Դերվիշի ղեկավարությամբ թալանվում են ու հրկիզվում:²³

10 փետրվարի

• "Русское Ведомостѣ" թերթում կոմսուխի Ալեքսանդրա Տոլստոյի հրապարակած մի հոդվածում նշվում է, որ Ալաշկերտի հովտից հայ գաղթականների 40 հազարանոց մի հոծ զանգված գաղթում է Արարատյան դաշտավայր, որոնց վիճակը ծայր աստիճան ծանր է: «Պատերազմի սկզբում քրդերը նրանց նկատմամբ ցուցաբերեցին անասելի դաժանություն, տղամարդկանց սպանեցին, կանանց տարան... Ես երբեք նման տանջանք չեմ տեսել: Նրանք զրկվել են ընտանիքից, ամեն ինչից...»:²⁴

11 փետրվարի

• Անգորայի նահանգի Էվերեկ գյուղում Ամերիկայի միացյալ նահանգներից նոր վերադարձած Գևորգ անունով մի երիտասարդի տանը լուսմբ է պայթում ու սպանում նրան: Էվերեկի ոստիկանապետը, առիթից օգտվելով, ձերբակալում է բազմաթիվ հայերի, որոնց անընդհատ զանակոծում և տանջում են: Դեպքերին ականատես Ֆրիդա անունով մի գերմանուհի պատմել է, որ շատերը, չղիմամալով խոշտանգումներին, մահացել են:²⁵

12 փետրվարի

• Թուրքական կառավարությունը սկսում է հայ պաշտոնյաների պաշտոնանկությունը, օսմանյան բանակի հայ զինվորականության զինաթափումն ու նրանցով բանվորական վաշտերի կազմումը, հայ սպայակազմի մեկուսացումն ու բանտարկությունը, հայերի գույքի առաջին բռնագրավումները և հայերի ջարդն իրագործելու համար նախասահմանված հրոսակային ուժերի վերջնական ծրագրավորումը:²⁶

13 փետրվարի

• Օսմանյան պառլամենտում Վանից երեսփոխան Վռամյանը ներքին գործերի նախարարությանը մի տեղեկագիր է ներկայացնում, որով հայտնում է, որ Վանի գավառի Կարճկան գավառակում և Գավուշ գյուղում զինաթափվել են օսմանյան բանակի հայ զինվորները և զրաստների նման, թուրք զինվորների հսկողության տակ քշվել անծանոթ վայրեր, իսկ զինված թուրքերն ու քրդերն այդ ժամանակ ավերում էին հայկական գյուղերը: Բացի այդ, բանտերից ազատ արձակված նախկին գողերը, ավազակները և բանակից փախած քրդերը Բաշքալեում ու շրջակա գյուղերում ջարդում էին հայերին:²⁷

14 փետրվարի

- Պոլսում Թալեաթի և կուսակցական գործիչ Ջիա Կեոքալիի նախագահությամբ երիտթուրքերի կուսակցության կենտրոնական կազմակերպության ժողովը որոշում է հիմնովին բնաջնջել հայերին և դրանով վերացնել Հայկական հարցը: Ստեղծվում է Երեքի գործադիր կոմիտեն, որն էլ պետք է վերահսկեր այդ գործընթացը:²⁸
- Թուրքական զորքերը պաշարում են Դյորք-Յուլ և 1600 հայ երիտասարդների տանում՝ ճանապարհների շինարարության վրա աշխատելու պատրվակով:²⁹

15 փետրվարի

- Փետրվարի 14-ի լույս 15-ի գիշերը Պարսկաստանի Սալմաստ շրջանի Խոսրով և Մեհլեմ գյուղերում սպանվում են 707 հայ: Տեղի պարսիկ բնակչությունը պաշտպանում և թաքցնում է հայերին ու ասորիներին: Այս մասին Կովկասյան ռազմաճակատի Առաջին բանակի հրամանատարի տեղակալին գրած նամակում հայտնում է Կ. Մարտիկյանը և նշում. «Մինչև ամսի 14-ը հայերն անվնաս էին մնացել շնորհիվ պարսիկ բնակչության, բայց այդ օրերին թուրքական կառավարությունը մունեթիկների միջոցով սպառնաց պատժել այն բոլոր պարսիկներին, ովքեր կթաքցնեն քրիստոնյաներին: Դիմանի պարսիկները մույմիսկ այդ սպառնալիքի տակ չկատարեցին հրամանը, և թուրքական կառավարության ներկայացուցիչ, գայմագամ Ռուստամ բեկը հրամայեց քրդերին ու զինվորներին պարսիկների տներից հանել քրիստոնյաներին ու սպանել նրանց թաքցնողներին: Հրամանը կատարվեց անմիջապես և գտան 7 հոգու: Մնացած 700 հոգուն ևս մույն ձևով են հավաքել ու տարել Հարիվան ու Խոսրով գյուղերը, որտեղ էլ 20-րդ դարի հսկար անբացատրելի ու աններելի տանջանքներով սպանել են: Անձամբ ես սեփական աչքերով տեսա հանրայնապոր մորթուված դիակներ՝ փոսերի մեջ, որոնց զարշահուող պատել էր այդ քաղաքների օդը: Տեսա գլխատված մարմիններ, կացիններով կտրված ձեռքեր, ոտքեր, կտրուված մատներ, մաշկահանված զանգեր, տասնյակ դիակներ՝ քանդված տների ու ցանկապատերի տակ, որոնց մեջ էր նաև Մեհլեմայի հոգևորական Տեր Վարդանը»:³⁰

18 փետրվարի

- Երիտթուրքերի կուսակցության կենտրոնական կազմակերպության անդամ Բեհաեդդին Շաքիրի ստորագրությամբ մի նամակով՝ կուսակցությունը շրջանների ներկայացուցիչներին հաղորդում է հայերի բնաջնջման որոշումն ու ծրագիրը, որտեղ նշվում է. «Թուրքիայում «Միություն և առաջադիմության» քաղաքական կյանքը խափանող միակ կարող ուժը հայերն են... Եթե անցյալի ողջ պատմության իրադարձությունները մանրազնինքնենք, կտեսնենք, որ Ճեմիյեթի [երիտթուրքերի կենտկոմի] հայրենասիրական ջանքերի ճանապարհին հայտնված բոլոր փոթորիկները հայերի ցանած խռովության սերմերի հետևանքն են... Եվ Ճեմիյեթը Թուրքիայում բնակվող բոլոր հայերին, առանց բացառության, որոշել է ոչնչացնել՝ այս գործում կառավարությանը տալով լայն իրավասություններ: Ջարդերն իրականացնելու մասին կառավարությունը կուսակալներին ու բանակի հրամանատարներին հարկ եղած պարզաբանումներ կտա: Իթքիհատ վեթերաքքիի բոլոր պատվիրակներն իրենց գտնված վայրերում պետք է

գրադվեն այս խնդրի իրականացմամբ: Չպետք է թույլ տալ, որ թեկուզ մեկ հայ օգնություն և պաշտպանություն ստանա»:³¹

• ԱՄՆ-ի պետական քարտուղար Բրայենը դեսպան Մորգենթաուից պահանջում է, որ նա փորձի Թուրքական կառավարությունից Պաղեստինի և Սիրիայի քաղաքացիական և զինվորական իշխանություններին ուղղված մի հրահանգ ապահովել, ըստ որի թուրքերը պատասխանատու էին լինելու, եթե հրեաների և քրիստոնյաների կյանքին ու գույքին որևէ վտանգ սպառնա:³²

• “The New York Times”-ը գրում է, որ Թալեաթը «Associated Press»-ի թղթակցի հետ խոսելով Թուրքիայի պատերազմի մեջ մտնելու շարժառիթների մասին, ասում է. «Իսլամի վշտարեկ աչքերն ուղղված են դեպի թուրքերը... Օսմանյան զինված ուժերի հաջողությունը կհանգեցնի Ռուսաստանի, Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի տիրապետության դեմ մուսուլմանների պայքարին»:³³

19 փետրվարի

• Բանտերից ազատված մարդասպաններից ու ոճրագործներից կազմվում է ջարդարար մի հատուկ ուժ, որը հետագայում, մայիսի կեսերին կկոտորի Կարինի մոտ աշխատող զինաթափված հայ զինվորներին:³⁴

20 փետրվարի

• Թալեաթը ԱՄՆ-ի դեսպան Մորգենթաուին վստահեցնում է, որ իբր, հայերին ու հրեաներին ոչ մի վտանգ չի սպառնում և որ նրանք լավագույնս պաշտպանված են: Իսկ այդ ժամանակ Վանի նահանգի գյուղերում ժանդարմներն ու չեթեները հայերի դեմ բռնություններ ու սպանություններ էին կատարում:³⁵

• Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքը հունդիպում է Գերմանիայի դեսպան Վանգեկմայմլի հետ և խոսում միջնորդել, որ «գերմանացի զինվորականներն ու հյուպատոսներն իրենց պաշտպանության տակ վերցնեն սահմանամերձ գավառներում գտնվող պատերազմից տուժած հայ ազգաբնակչությունը»: Դեսպանը խոստանում է, որ գերմանացի ծառայողները որքան հնարավոր է հոգ կտանեն հայերի համար, իսկ ինքն էլ անձամբ Բարձր Դռան հետ կքննարկի դրա հետ առնչվող հարցերը:³⁶

26 փետրվարի

• Էնվեր փաշան Կոստանդնուպոլսից պատասխան հեռագիր է ուղարկում Կոնիայի եպիսկոպոսին, որն իրեն կովկասյան ճակատից վերադարձի ժամանակ ողջույնի ուղերձ էր հղել: Իր հեռագրում Էնվերը գրում է. «...Օգտվելով առիթից ուզում եմ Ձեզ ասել, որ օսմանյան բանակի հայ զինվորները բարեխղճորեն են կատարում իրենց պարտքը ռազմաճակատում, և ես կարող եմ վկայել սեփական փորձից ելնելով: Խնդրում եմ իմ գոհունակությունն ու շնորհակալությունը հաղորդել հայ ժողովրդին, որը հայտնի է իր լիակատար նվիրվածությամբ օսմանյան կայսերական կառավարության նկատմամբ»:³⁷

27 փետրվարի

• Հայ հեղափոխական դաշնակցության կենտրոնական օրգան «Ազատամարտ» թերթը գրում է. «Գյուղերում մնացած բոլոր երիտասարդ կանանց ու աղջիկներին առևանգել են և ստիպել իսլամ ընդունել: Կառավարության նպատակը, ինչպես երևում է, հայերին իրենց կենտրոններից

հեռացնելն է: Նորից նշվում է, որ թեև դաշնակցականները կատարում են իրենց քաղաքացիական պարտքը, այնուամենայնիվ կառավարությունը նրանց չի վստահում»:³⁸

• Լուրեր են հասնում Պոլիս, որ Ալաշկերտի գավառում ջարդեր են կատարվում, կանանց ու աղջիկներին ստիպում են կրճատվել լինել:³⁹

15/28 փետրվարի

• Ջեյթումում սկսվում է ակտիվ ու հեղինակավոր մարդկանց ձերբակալությունը: Երկու օրում ձերբակալվում են 60 հոգի, որոնց նկատմամբ կիրառվում են բռնություններ: Ոմանք հասցնում են փախչել լեռները:⁴⁰

1915

ՄԱՐՏ

1 մարտի

• Մուլթանական մի հրամանագրով լուծարվում է Օսմանյան կայսրության ազգային (երեսփոխանական) ժողովը՝ նպատակ ունենալով կանխել երիտթուրքերի կուսակցության ներքին և արտաքին քաղաքականության դեմ հանդես եկող ցանկացած ընդդիմություն:⁴¹

3 մարտի

• Կոստանդնուպոլսից Վիեննա ուղարկված թիվ 93 տեղեկագրում նշվում է. «Գերմանիայի հանդեպ տաժած սկզբնական ոգևորությունը կտրուկ անկում է ապրում: Նրանց թիվը, ովքեր պատերազմը մեծ դժվարություն են համարում, աճում է: Անվերապահորեն հուսալի են միայն էմվերը և Թալե-աթը: Էմվերը գիտի, որ իր ճակատագիրը կապված է այս պատերազմի և Գերմանիայի ու Ավստրիո-Հունգարիայի հետ-դաշինքի հետ: Նա գիտի նաև, որ իր կյանքը լրջորեն վտանգված է, ուստի ապահովագրության մեծ միջոցներ է ձեռնարկել իր անձի համար: Նա վստահում է միայն այսպես կոչված Յանուին՝ ռազմական ոստիկանությանը, որն էլ հսկում է նրան»:⁴²

• Անկարայի կենտրոնական բանտից ազատ են արձակվում 249 հանցագործ մարդասպաններ, որոնք, ինչպես ռազմական դատարանում վկայել է Յոզդաթի կառավարիչ Ջեմալը, «օգտագործվեցին հայերի կոտորածներն իրականացնելու համար»:⁴³

7 մարտի

• Ադանայի նահանգի Ալեքսանդրետ քաղաքից գերմանական հյուպատոս Հոֆմանը դեսպան Վանգենհայմին հաղորդում է, որ վերջին օրերին քաղաքի բոլոր հայերի, հույների և ասորիների տներում, Կոստանդնուպոլսից ստացված հրահանգի համաձայն, անց են կացվում խուզարկություններ և բռնագրավվում են օտար լեզվով գրություններն ու գրքերը: «Որքան ճանաչում եմ այստեղի փոքր ազգաբնակչությանը [հայերին], - գրում է հյուպատոսը, - չեմ հավատում, որ նա երկրի հանդեպ դավաճանաբար գործի: Այդ պատճառով էլ նշված միջոցառումը զարմացրեց այստեղի օտարերկրյա քաղաքացիներին...»:⁴⁴

8 մարտի

• Ադրիանապոլսից ավատորոհումգարական հյուպատոս Նադամլենցկին, գուշակելով վերահաս ահավոր վտանգը, փորձում է համոզել Պալավիչին՝ չհեռանալ հայերից. «Ձերդ գերագանցություն, այստեղի պայմանները ծաղր են ամեն մի մշակույթի, ամեն մի պետական իմաստության նկատմամբ: Հազարավոր մարդիկ հանձնված են անպատասխանատու անձանց, ավագակախմբերի քմահաճույթին: Միթե՞ նրանք պետք է անպատիժ շարունակեն իրենց գործը: Միթե՞ մենք հնարավորություն ունենում ենք վերջ տալու այդ գործելակերպին, որը սև ստվեր է գցում մեր հեղինակության վրա: Միթե՞ պետք է սարսուռով մայենք, թե ինչպես է Թուրքիան ավելի խորը փորում իր գերեզմանը...»: ⁴⁵

10 մարտի

• Միսի Սահակ կաթողիկոսը Ջեյթունի զինվորական դասալիքների հարցով Թալեաթին մարտի 2-ին դիմելուց հետո՝ դիմում է նաև Օսմանյան կայսրության ծովային նախարար և չորրորդ բանակի հրամանատար Ջեմալ փաշային, որից մույն օրն իսկ ստացված պատասխանում նշվում էր. «Ձեռնարկվելիք միջոցառումները միայն օրինազանցներին են վերաբերելու, ամենևո՛ւ և հավատարիմ ժողովրդի գույքը, կյանքն ու պատիվը սուրբ են և անձեռնմխելի»: ⁴⁶

11 մարտի

• Հայ հեղափոխական դաշնակցության կենտրոնական օրգան «Ազատամարտ» թերթը գրում է. «Ջեյթունում, ըստ պաշտոնական աղբյուրների, ընդհարումներ են տեղի ունեցել: Բայրութի ողջ բնակչությունը համընդհանուր կոտորածի մղձավանջի պայմաններում է ապրում: Կառավարությունը կարգադրել է զինաթափել բոլոր հայ զինվորներին և ամենաչնչին առիթով նրանց զնդակահարել»: ⁴⁷

13 մարտի

• Ադանայի գերմանական հյուպատոս Բյուզեն դեսպան Վանզենհայմին հաղորդում է. «Հայերը դավադրություն կամ ապստամբություն կատարող որևէ կազմակերպություն չեն ունեցել»: Նա հայտնում է նաև, որ Դյորք-Յոլի ողջ արական սեռի բնակչությանը տարել են Հալեպի նահանգի ճանապարհների շինարարության վրա աշխատելու: ⁴⁸

• Կոստանդնուպոլսից Բուլղարիայի լիազոր-նախարար դոկտոր Ն. Կուլուշը նախարարների խորհրդի նախագահ դոկտոր Վ. Ռադոսլավովին ուղղված նամակում գրում է, որ ամերիկյան և իտալական դեսպաններն իրենց մտահոգությունն են արտահայտում հայերի նկատմամբ թուրքական կառավարության կիրառած խստագույն միջոցների առթիվ: «Նրանք դա համարում են Թուրքիայում հայերի ընդհանուր կոտորածների նախագուշակ: Կոստանդնուպոլսում և երկրի խորքում տեղի են ունեցել հայերի ձերբակալություններ: Կոստանդնուպոլսում հայկական կոմիտեի 14 անդամներ հանձնված են ռազմական դատարանին: Մարկիզ Գարոնին հայտնել են, որ բոլորն էլ դատապարտվել են մահվան և Կոստանդնուպոլսում կախաղան են բարձրացվելու: Դա հանդիսանալու է կոտորածների

⁴⁵ Խոսքը հնչակյան կոմիտեի մասին է:

ազդանշանը, իսկ դեսպանները ջանքեր են գործադրում կոտորածը կանխելու համար և ինձ խնդրեցին, որ ես օժանդակեմ նրանց»:⁴⁹

14 մարտի

• Կարինի ոստիկանապետի տեղակալ Սուլեյման էֆենդին 30 ժանդարմների հետ մանում է Էրզրումի մահաճգի Շրգնկայի գավառի գյուղերը, դրան պահանջում, ապա, զենք հայտնաբերելու պատրվակով սկսում է խուզարկել տները, ծաղր ու ծանակի ենթարկում գյուղացիներին ու ծեծում: Այսպես շարունակում է մինչև ամսվա վերջ:⁵⁰

15 մարտի

• Կոստանդնուպոլսում ռուսական դեսպանատան թարգման Սերաֆիմովը հեռագրում է իրենց արտաքին գործերի նախարարություն. «Հայերի դուրքումը Թուրքիայում որոշակիորեն վատացել է: Ձերամասերում ծառայող բոլոր հայերը զինաթափված են: Ձեյթուն ուղարկված զինված ջոկատի հետ, որը պետք է բռներ այնտեղ թաքնված դասալիքներին, տեղի ունեցան բախումներ, որոնք հանգեցրին զինվորական դատարանի հաստատմանը և բնակիչների դատան հաշվեհարդարին: Գերտել կոչվող բնակավայրի ողջ արական բնակչությունը աքստրված է: Էրզրումի շրջակայքում գտնվող 17 գյուղերից փրկվել են միայն երեքը: Մյուսները թալանված և ոչնչացված են: Ամբողջ երկրով մեկ կատարվում են հայերի ձերբակալություններ: Բուն Կոստանդնուպոլսում ձերբակալվում են 14 հնչակյաններ, որոնք ենթակա են զինվորական դատարանի վճռին: Հայոց պատրիարքարանը խիստ մտահոգված է ստեղծված կացությամբ և վախենում է կոտորածից»:⁵¹

16 մարտի

• Միսի Սահակ Բ կաթողիկոսը Պոլսի հայոց պատրիարքին գրում է. «Կառավարությունը միջոցներ ձեռք առավ Ձեյթունի փախստականների դեմ... վախենում ենք՝ չլինի թե խնդիրը Ձեյթունի հավատարիմ բնակչությանը հարվածելու շուրջն է: Համոզված ենք, որ մեծ դժբախտություն է սպասում մեզ»:⁵²

• Խարբերդում Գերմանիայի հյուպատոսի և կուսակալի միջև տեղի ունեցած հանդիպման ժամանակ վերջինս հայտարարում է. «Թուրքիայում հայերը պետք է բնաջնջվեն: Նրանք այնքան են հարստացել ու բազմացել, որ իշխող թուրքերի համար վտանգավոր են դարձել... և բնաջնջումը միակ դեղամիջոցն է»: Եվ հենց մույն օրն էլ հայերի կողմից զենքի հանձնման ընթացքից դժգոհ կուսակալի հրամանով ձերբակալվում են մի խումբ հայ երիտասարդներ, որոնց մեղադրում են զենքը թաքցնելու մեջ:⁵³

17 մարտի

• Բուլղարիայի լիազոր-նախարար դոկտոր Կոլուշկո նախարարների խորհրդի նախագահ դոկտոր Վ. Ուադսոլավովին գրում է. «... Թուրքերը Ձեյթունում մեծ անկարգություններ են կատարել: Ամերիկյան և իտալական դեսպանները նորից դիմեցին Թալեաթ բեյին, որպեսզի կանխվեն անկարգությունները և գործադրված խիստ միջոցառումների ընդլայնումը... Թալեաթ բեյի հետ խոսեցի մտերմորեն: Նա գտնում է, որ դա տեղական բնույթի դժբախտ պատահար է, և որ ինքը ամենախիստ միջոցներ է ձեռնարկել հայ բնակչությանը հանգստացնելու ուղղությամբ»:⁵⁴

18 մարտի

• Հալեալում Գերմանիայի հյուպատոս Ռ-յուսլերի և Ջեմալ փաշայի մի հանդիպման ժամանակ Ջեմալը առաջարկում է հյուպատոսին. «... չմիջամտել կառավարության գործերին և համակերպվել զինվորական իշխանությունների հրահանգներին, քանի որ ինքն անձամբ արգելել է թուրքերին հարձակվել հայերի վրա՝ սպառնալով նրանց համարել հասարակական կարգ ու կանոնի խանգարողներ: Իսկ ինչ վերաբերում է կառավարության կողմից հայերի դեմ կիրառվող միջոցառումների խստությանը՝ դրա պատճառը զեյթունցիների ապստամբությունն է»:⁵⁵

20 մարտի

• Կարինի և Բիթլիսի նահանգներից Պուլսի Հայ հեղափոխական դաշնակցության բյուրոյին զեկուցում են. «Գյուղերում տիրող կողոպուտի և անապահովության հետևանքով դժվարություններն ավելանում են: Մարսափելի է հայերի տնտեսական դրությունը. նրանք ամենուրեք մուրացկանության են մատնված... Ընդհանուր ջարդերի երկյուղը կախված է մեր գլխավերևը»: Թուրքերն ասում են, որ հայերն են պատասխանատու այս պատերազմի համար և «մենք պետք է բնաջնջենք ձեզ»:⁵⁶

• «The New York Times»-ը գրում է, որ Լոնդոնի հայկական Կարմիր խաչի ֆոնդը Հայաստանի մասին սարսափազդու լուրեր է ստացել: «Բժիշկ Տերտերյանի հաղորդագրության համաձայն Ալաշկերտի հովիտը ծածկված է տղամարդկանց, կանանց ու երեխաների դիակներով: Այդ շրջանից ռուսական զորքերի նահանջին հաջորդեց քրդերի հարձակումն անօգնական ժողովրդի վրա: Տղամարդկանց սպանում էին, կանանց՝ տանում լեռները»:⁵⁷

• «The New York Times»-ը մեկ այլ հաղորդագրության մեջ գրում է, որ Պարսկաստանի Ուրմիա քաղաքից հեռագիր է ստացվել Պետրոգրադ, որ թուրքերն ու քրդերը կողոպտել և այրել են գյուղերը, սպանել բնակիչներին: Սալմաստում, Փազադուկում և Սարնայում թուրք ներկայացուցչի կողմից քաղաքներ ոչնչացնելու հրամաններ են տրվել: «Անտվատի բոլոր հայ բնակիչներին վերոհիշյալ հրահանգի համաձայն հավաքել են, 600 տղամարդու մահվան են դատապարտել, իսկ կանանց հարկադրել են ընդունել մահմեդականություն, խմբերի բաժանել և ուղարկել տարբեր քաղաքներ»:⁵⁸

22 մարտի

• Ջեյթունից Արեգին գյուղ ընկած ճանապարհին թուրքական բանակում հայ զինվորների նկատմամբ առկա անվստահությանը, ծեծ ու ծաղրանքին չդիմացած ու փախած մի խումբ հայ զինվորներ հանդիպում են Ջեյթունի կայազորի համար նոր տեսակի զենքեր տեղափոխող 20 թուրք ժանդարմների և տեղի ունեցած մարտում հաղթելով նրանց՝ խլում են զենքն ու միաժամանակ՝ կտրելով հեռագրական կապը Ջեյթունի և Մարաշի միջև, հետանում դեպի Ջեյթունի վանք: Նրանց նպատակն էր ոտքի հանել քաղաքի բնակիչներին, գրավել կառավարական տունն ու գորանոցները և բնակչությանը պաշտպանել վերահաս կոտորածներից:⁵⁹

23 մարտի

• Մարտի 23-ին Իզդիրից "Русские Ведомости" թերթին ուղարկած «Փախստական հայեր» վերնագրով թղթակցության մեջ նշվում է. «...Առաջին փախստականները հայտնվեցին հոկտեմբերի (1914թ.) վերջերին... Բայց դա չնչին էր այն փախստականների համեմատ, որոնք լցվեցին դեկտեմ-

բերյան օրերին, երբ թուրքերի տեղաշարժերը ճակատում ստիպեցին մեր զորքերին առանձին տեղամասերում ընդամենը տաս օրով մահանջել դեպի Ռուսաստանի սահմանները: Բայց այդ տասը օրերն էլ հերիք էին, որ հազարավոր կյանքեր կորցվեին և տասնյակ հազարավոր մարդիկ էլ թալանվեին մինչև վերջին շապիկները: Արդեն նկարագրվել է այդ խաղաղ բնակչության մեծ «ելքի» տեսարանը, երբ մարդիկ դաժան ցրտի ու բքի միջով սարսափահար փախչում էին՝ լեռնային կեռ ճանապարհներին դիակներ թողնելով...»: Հոգվածում նշվում է նաև, որ նրանք 60000 հոգի են եղել, որոնցից 10000-ից ավել ճանապարհին են մնացել:⁶⁰

24 մարտի

• Մարաշից հայ երևելիների մի պատվիրակություն է գնում Ջեյթում, որոնց թվում նաև Բլանկ անունով մի գերմանացի՝ համոզելու համար հայերին, որ ենթարկվեն կառավարության պահանջներին, այսինքն՝ հանձնեն բոլոր ապստամբ երիտասարդներին, որի դիմաց կառավարությունը խոստանում է չպատժել անմեղներին:⁶¹

25 մարտի

• «Թեշքիլար Մահաուսեի» ղեկավար Բեհաեդդին Շաքիրը Ադանայի իթքիհատական պատվիրակ Ջեմալ բեյին հասցեագրված երկրորդ մամալում գրում է. «Դարեր ի վեր պետության քաղաքակրթությանն ու առաջադիմությանն արգելք հանդիսացած ծանոթ անձանց [իմա՝ հայերի] գոյությունը ջնջելը... բոլորիս պարտականությունն է: Դրա համար «ինչ ուզում է լինի» ասելով պետք է ողջ պատասխանատվությունը ստանձնենք... և ձեռնարկված միջոցառումները պահանջված արդյունքներին հասցենք...»: Ապա հիշեցնելով հայերի բնաջնջման մասին կուսակցության փետրվարի 18-ի որոշումն ու ծրագիրը և քննադատելով նրա մախտոք՝ Ալի Ռիզա բեյին, որը հայերին գթալու կոչ էր անում, շեշտում է, որ պետք է շարունակել հայերի կոտորածները, մինչև հերթը հասնի մյուսներին, այսինքն՝ հույներին, արաբներին և սիրիացիներին (ասորիներին):⁶²

• Թալեաթը հրահանգում է Ադանայի կուսակալությանը ձեռքակալել կուսակցական հայ ղեկավարներին, լուսանկարել նրանց իրենց մոտ գտնվող զենքերով և ուղարկել մախարարություն:⁶³

28 մարտի

• Ամասիայում (Մերաստիայի մահանգ) թուրքերն աքսորում են հայ հոգևոր առաջնորդին և, ինչպես մյուս բոլոր կաթոլիկական հաստատություններն ու եկեղեցին՝ զավթում առաջնորդարանը:⁶⁴

29 մարտի

• Օսմանյան IV բանակի հրամանատար Ջեմալ փաշան հրապարակում է ֆրանսերեն լեզվով մի շրջաբերական-ազդարարագիր, որտեղ նշվում է, որ Ջեյթումում կառավարության կողմից իրականացվող ռազմական գործողության ընթացքում ոչ մի մահմեդական չպետք է խառնվի կառավարության գործերին և հարձակվի հայերի վրա, այլ պետք է ենթարկվի զինվորական իշխանության ցուցումներին, քանի որ «կառավարության պարտականությունն է պաշտպանել հնազանդ ազգաբնակչության կյանքը, պատիվը և բարեկեցությունը, լինի դա հայ, թե մահմեդական»:⁶⁵

31 մարտի

• Թուրքիայի ռազմական նախարար Էնվերի հրահանգով դադարեցվում է երիտթուրքերի կուսակցության քաղաքական դաշնակից Հայ հեղափոխական դաշնակցության Կոստանդնուպոլսի պաշտոնաթերթ «Ազատամարտի» հրատարակումը. խմբագիրներից մեկը, որ պարսկահպատակ էր, ձերբակալվում է: Խստորեն գրաքննության են ենթարկվում նաև արտասահմանյան թղթակիցների հաղորդագրությունները:⁶⁶

• Հալեայի գերմանական հյուպատոս Ռյոսլերը Մարաշից դեսպան Վանգենհայմին ուղարկած հեռագրում նշում է, որ Ջեյթունի մոտակայքում գտնվող վանքում ապաստանած հայ դասալիքները շրջափակումը ճեղքելով փախել են լեռները: Նա գրում է նաև, որ կառավարության պահանջով իրենց զինվորական պարտքը կատարելու համար ինքնակամ Ջեյթունից ներկայացել են 125, Մարաշից՝ 450 մարդ: «Ջենքեր գտնելու մպատակով տնային խուզարկություններ են անցկացվում միայն քրիստոնյաների, հազվադեպ՝ մուսուլմանների մոտ...»:⁶⁷

1915

ԱՊՐԻԼ

1 ապրիլի

• Բաղդադում ամերիկյան հյուպատոս Բրիսելը պետքարտուղարին ուղարկած հաղորդագրության մեջ նշում է, որ Բաղդադի թուրքական զորամասում ծառայող բոլոր հայերից հավաքել են զենքերը և մրանց ստիպում են աշխատել ճանապարհների և Մոսուլի երկաթգծի շինարարության վրա:⁶⁸

• Հալեայից գերմանական հյուպատոս Ռյոսլերը դեսպան Վանգենհայմին հայտնում է. «Ջենալ փաշան չորեքշաբթի օրը հրահանգել է, որ ոչ ոք չպետք է խառնվի կառավարության գործերին: Այն մահմեդականը, որը կհարձակվի որևէ հայի վրա, զինվորական դատարանի առջև կկանգնի»:⁶⁹

2 ապրիլի

• Գերմանացի միսիոներ Հանս Բեռնֆինդը գրում է, որ Մալաթիայի բանակ զորակոչված 700 հայերից 150-ն արդեն մահացել են հիվանդություններից ու կյանքի աղետալի պայմաններից:⁷⁰

3 ապրիլի

• Դիվանագիտական հարաբերությունների պաշտոնյա Ստոլիցկան Թիֆլիսից գաղտնի հեռագրով Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությանը հայտնում է, որ Խատիսովն իրեն է փոխանցել Սոֆիայից ստացված մի հեռագիր, որտեղ ասված է. «Համատարած կոտորած է էրզրումում, Տերդուլանում, Ջեյթունում և շրջակայքում: Արյունալի բախումներ Բիթլիսում, Վանում, Մուշում: Ապստամբություն է Կիլիկիայում: Բռնություններ, քալան, սպանություններ են Ալևում և ամբողջ Փոքր Հայքում: Ողջ ժողովուրդը սնանկ է: Կա սուլթանական հրահանգ՝ հայ զինվորների զինաթափման մասին...»

Այժմ Խատիսովը զեկուցում է Պետերսոնին՝ բողոքը ներկայացնելու եղանակի վերաբերյալ Կովկասի փոխարքայից հրահանգ ստանալու համար:⁷¹

• Վանի նահանգի Շատախ գավառում թուրքերն ու քրդերը հարձակվում են թաղ գյուղի վրա: Գավառը դիմում է ինքնապաշտպանության, որը տևում է մինչև մայիսի 10-ը, երբ մոտեցող ռուսական զորքերի ահից թշնամին փախուստի է դիմում:⁷²

6 ապրիլի

• Թուրքական կառավարությունը վերջնականապես որոշում է Խարբերդում իրականացնել հայերի բնաջնջման ծրագիր: սկսվում են ձերբակալություններն ու բանտարկությունները:⁷³

• Դիարբեքիից Մարդինի գավառի Ջիզրե ավան է մեկնում 1895թ. հայկական ջարդերի ժամանակ Դիարբեքիի կոտորածների առաջին կազմակերպիչ Արիֆ գաղե էֆենդիի որդի Ֆեյզի բեյը՝ հայերին կոտորելու համար հատուկ ստեղծված հանձնախումբը ղեկավարելու և քուրդ ցեղապետերի հետ տեղահանվող հայերի ոչնչացման հարցերը կարգավորելու նպատակով:⁷⁴

• ԱՄՆ-ի դեսպան Մորգենթաունը՝ տեղեկությունները քաղելով միսիոներներ՝ օրիորդ Հոնեկի և այրն. Բրկեի հաղորդագրություններից, պետքարտուղարին գրում է. «Ամեն օր Ջեյթունից 23000 հոգու խիստ հսկողության տակ տեղափոխում են Մարաշ և գիշերային կարճ դադարից հետո տանում անհայտ ուղղությամբ: Հյուրանոցներն ու հայկական երկու դպրոցները լի են Ջեյթունից, Ալաբաշից և Ֆուսուգից տեղահանված ընտանիքներով: Կառավարությունը որոշել է բռնությամբ տեղահանել մնացած բոլոր հայկական շրջանների բնակիչներին: Անհնարին է նկարագրել այն թվառությունը, ինչին հանգեցնում է տեղահանությունը, երբ ծերերը, հաշմանդամներն ու 4-5 տարեկան երեխաները խմբերով քայլում են ոտաբորիկ»:⁷⁵

• "Русские Ведомости" թերթն իր 1915թ. մայիսի 9-ի համարում անդրադառնալով Վանի նահանգի Արճեշ քաղաքից մի կերպ փախած հայերի պատմածներին, տպագրում է Օհանովսկու «Հայերի վերջին կոտորածը» վերնագրով հոդվածը, որտեղ ասված է. «Ապրիլի 6-ին թուրք ժանդարմներն ու չեթեները ձերբակալեցին քաղաքում գտնվող բոլոր հայերին ու լցրեցին բանտերն ու զորանոցները: Ապա նրանց խումբ-խումբ կապեցին իրար, տարան քաղաքից դուրս և հայտարարելով, որ ռուսներին համակրելու համար մահվան են դատապարտվում՝ զնդակահարեցին...»:⁷⁶

7 ապրիլի

• Ամենայն Հայոց Գևորգ V կաթողիկոսը հեռագրում է Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սազոնովին, որ թուրքերը զինաթափ արված հայ զինվորներին կոտորում են Էրզրումում, Դերջանում և Ջեյթունում ու շրջակայքում, արյունալի ընդհարումներ են տեղի ունենում Բիթլիսում, Մուշում, իսկ Կիլիկիայում՝ բռնություններ և կոռուպտիաներ: Նա նախարարի մարդասիրական հովանավորությունն ու պաշտպանությունն է խնդրում:⁷⁷

• Այնթապի Ամերիկյան կենտրոնական վարժարանի տնօրեն Ջոն Մերիլը Հալեպի ամերիկյան հյուպատոս Ջեքսոնին գրում է. «Փաքրի փաշան՝ Բիլիսում, մի քանի օր անց մահ Այնթապում հայտարարել է, որ ինքը կկախի թեկուզ մեկ քրիստոնյա սպանած մուսուլմանին»:⁷⁸

• Թուրքերը սկսում են հարձակումը Ջեյթունի վանքի վրա, որտեղ ապաստանել էին հայ երիտասարդները, որոնք, ինչպես Թուրքիայում Գերմանիայի զինվորական ներկայացուցչության պետ, զորավար Լիման ֆոն

Ձանդերսն է նշել իր տեղեկագրում, թուրք սպաների խոշտանգումների հետևանքով դասալքել և ապաստանել էին վանքում: Երեկոյան կողմ թուրքերը թեև ընդհուպ մոտենում են վանքին, բայց նրա թնդանոթներով քանդված պարսպից չեն կարողանում ներս խոծել և հարյուրից ավելի զոհեր տալով, որոնց թվում նաև հազարապետ Մուլեյմանը, վերադառնում են գորանոց: Նրանց հետանալուց հետո վանքի հայ երիտասարդները դուրս են գալիս և բարձրանում լեռ: «Վանքի վրա հարձակման ընթացքում թուրքերը տվեցին 101 սպանված և 110 վիրավոր: Դրա փոխարեն 8000 հայեր, որ կառավարության դեմ ոչինչ չէին արել, թալանվեցին և տարագրվեցին՝ համաձայն հորինված մի ծրագրի, որ հղացել են գերմանացիները...», - գրում է Ջեյթունի թուրք մուֆթին:

• Վանի Արճեշ քաղաքի հայերին գնդակահարելուց հետո, չեթները «... հաջորդ օրը գնացին գյուղերը, - գրում է "Русские Ведомости" թերթը: - Ամենուրեք տղամարդկանց հավաքում էին գորանոցներում, գիշերը 20-30 հոգու տանում քաղաքից դուրս ու գնդակահարում: Միաժամանակ քղերը խուժում էին հայերի տները, բռնաբարում կանանց ու աղջիկներին, զեղեցիկներին տանում, իսկ մնացածներին զցում թոնիրների մեջ և այրում...

Այս համատարած կոտորածներից մի քանի հարյուր երիտասարդներ կարողացան փրկվել՝ փախչելով Ռուսաստան, որոնց մեծ մասը միացավ հայկական կամավորական ջոկատներին...

Պետք է հուսալ, - նշվում է հոդվածում, - որ շուտով բազմաչարչար հայ ժողովրդի պատմության այս վերջին կոտորածը կդադարի, և ռուսական զորքերը այստեղ կավարտեն իրենց ազատագրական երթը...»: ⁸⁰

8 ապրիլի

• Պոլսում Թալեաթը Ջավեն պատրիարքի հետ հանդիպման ժամանակ նրան վստահեցնում է, որ երիտթուրքերի կառավարությունը հայերի նկատմամբ առանձին քաղաքականություն չի վարում, սակայն նույն օրն էլ նա «Թուրքիայում զենքերն ու ռազմամթերքը քիչ են» պատրվակով դիմում է զինվորական իշխանություններին, որ լիովին զինաթափեն օսմանյան բանակի հայ զինվորներին: ⁸¹

• Սկսվում են Ջեյթունի 28000 հայության և շրջակա գյուղերի տեղահանությունն ու աքսորը: Քաղաքից սկզբում տեղահանվում են 50 անվանի ընտանիքներ, ապա թաղերը՝ հերթով և աքսորվում Կարա-Բունարի և Տեր-Ջորի ուղղությամբ: Իսկ զորահրամանատար Խուրշիդ բեյի հրամանով այրվում է Ջեյթունի վանքն ու փշրվում եկեղեցիների կամարների հայերեն արձանագրությունները: ⁸²

9 ապրիլի

• Սեբաստիայի բոլոր հայ պաշտոնյաներն առանց զգուշացման ազատվում են իրենց պաշտոններից, վերացվում են հայ ձեռներեցների հետ կնքած պայմանագրերը: ⁸³

• Այնթապի քուլեջի տնօրեն Ջոն Մերիլը Հալեայի ամերիկյան հյուպատոս Ջեքսոնին ապրիլի 20-ին ուղարկած զեկուցագրում նշում է, որ Մարաշի հայերին հրամայվել է 3 օրում գրանցել իրենց զենքերը, սակայն ժամկետը չլրացած՝ թուրք պաշտոնյաները մտել են հայերի տները, կատարել ձեռքակալություններ և թալանել նրանց ունեցվածքը: Իսկ քաղաքի թուրք ղեկավարներից մեկը գերմանացի հյուպատոսին ասել է, որ չեն վստահում հայերին և չեն հանգստանա մինչև մի քանիսին չբանտարկեն ու չկախեն: ⁸⁴

- Կոստանդնուպոլսից Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինին արտաքին գործերի նախարար Բուրիանին գրում է, որ Բրուսայի զինապարտ հայերին՝ մինչև 45 տարեկանը, գորակաչում են բանակ և ուղարկում հեռավոր նահանգներ: Նրանց թիվն անցնում է մի քանի հազարից:⁸⁵
- Հալեպի ամերիկյան հյուպատոս Ջեքսոնը՝ դեսպան Մորգենթաուին ուղարկած զեկուցագրում հայտնում է, որ, ամերիկյան միախոնքների տեղեկությունների համաձայն, ապրիլի 9-ին զեյթունցի 35 անվանի մարդկանց իրենց ընտանիքներով կանչել են կառավարական տուն և հայտնել, որ պետք է արտաքսվեն: Նրանց թույլ չի տրվել տուն վերադառնալ և պատրաստվել մեկնելու: Երկու օր Մարաշում պահելուց հետո նրանց աքսորել են Իրաքի ուղղությամբ:⁸⁶

10 ապրիլի

- Թուրք և գերմանացի սպաները ստիպել են Ջեյթունից տարագրվող հայերին թողնել իրենց ունեցվածքը. այն տրվելու էր Թրակիայից եկած մահմեդականներին:⁸⁷
- Կեսարիայում Հակոբ Գայայան անունով մի հայի տան բակում պայթյուն է տեղի ունենում, որի հետևանքով իշխանությունները տան բոլոր տղամարդկանց ձերբակալում և սպանում են, կանանց բռնաբարում, տունն էլ այրում:⁸⁸
- Կոստանդնուպոլսի ռուսական դեսպանատան թարգման Սերաֆիմովը հեռագրում է արտաքին գործերի նախարարություն. «...Իշխանությունների թալանը հասել է ծայրահեղ չափերի: Քրիստոնյա բնակչությունը, հատկապես հայերը, ենթարկվում են տանջանքների: Ջինվորական ծառայության կանչվելու պատրվակով բանտարկում են մարդկանց՝ առանց տարիքը հարցնելու, որոնց բռնում էին խանութներում, եկեղեցիներում, փողոցներում...»:⁸⁹
- Կովկասի փոխարքային կից դիվանագիտական հարաբերությունների պաշտոնյա Ստոլիցան հեռագրում է արտաքին գործերի նախարարությանը. «23 տղամարդ, որ փրկվել են Արչեսոցի և Սամսոնից, պատմում են ոստիկանության կողմից տեղացի հայերի գլխովին զնդակահարման և ջարդելու մասին... Անհրաժեշտ է ժամանակին հոգ տանել Վանի նահանգից փախստականների սպասվող զանգվածներին բավարար օգնություն ցույց տալու մասին»:⁹⁰

11 ապրիլի

- Ջենք փնտրելու պատրվակով թուրքերը սկսում են խուզարկություններ կատարել Կեսարիայի բոլոր հայերի բնակարաններում: Անգամ խոհանոցի դանակ գտնելու դեպքում տանտիրոջը ստիպում էին զենք զենլ թուրք հարկաններից, որը և հետո նրանց պատժելու համար պատրվակ էր դառնում:⁹¹

12 ապրիլի

- Կարինում ձերբակալվում են մի շարք հայ մտավորականներ ու անվանի մարդիկ, որոնց տանջանքներից հետո ստիպում են տապալել 1878թ. ռուս-թուրքական պատերազմի ժուս նահատակ զինվորների հիշատակին կառուցված հուշարձանը:⁹²
- Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթը Ադանայի իշխանություններին տեղեկացնում է, թե Վանի և Մեքաստիայի նահանգներում «հրոսակներ» են հայտնվել, որոնց ոչնչացման համար միջոցառումներ են

ձեռնարկվել, ուստի խնդրում է կուսակալությանը աշխատել նման «հրոսակներ» հայտնաբերել նաև Ադանայի նահանգում: Դիշտ այնպես, ինչպես իր տունդարձի ճանապարհին արեց Սարիդամիշի ճակատամարտում պարտված էնվերը, երբ հասավ Սեբաստիայի և Կեսարիայի միջև գտնվող Կեներեկ գյուղաքաղաք ու հրամայեց կոտորել 13000 հայերից 10000-ին:⁹³

• «Ուրբաթ օրը [ապրիլի 12-ին] Ձեթունից ելավ զաղթականների երկրորդ խումբը, – գրում է Հալեպի ամերիկյան հյուպատոս Ջեքսոնը ապրիլի 21-ին դեսպան Մորգենթաուին հղած տեղեկագրում, – որի կազմում էին քաղաքի գրիգորյան երեք եկեղեցիների քահանաներ և հեղինակավոր անձինք, որոնց դեմ քաղաքսկան որևէ մեղադրանք չկար՝ չխոսելով արդեն կանանց ու երեխաների մասին: Իմացա, որ նրանց ուղարկում են Իրաք:

Երկարատև ճամփորդությունից հետո նրանցից ողջ մնացողները կբնակեցվեն ամենաաշոգ վայրերում...»:⁹⁴

• Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սազոնովը հեռագրում է Փարիզում և Լոնդոնում դեսպաններ Իզվոլսկուն և Բենկենդորֆին. «Նախարարությունում ստացվել են նոր տեղեկություններ Ասիական Թուրքիայում տիրող անիշխանության և թուրքերի ու քրդերի կողմից հայերի կոտորածների մասին: Բարեհաճեք առաջարկել ֆրանսիական (անգլիական) կառավարությանը մեզ հետ և Անգլիայի (Ֆրանսիայի) հետ համատեղ դիմում հրապարակել՝ ուղղված Բ. Դռանը, որի մեջ անձնական պատասխանատվությունը հայերի կոտորածի համար դրվի Թուրքիայի կառավարության բոլոր անդամների, ինչպես նաև այդ իրադարձությունների հետ առնչվող բոլոր քաղաքացիական ու զինվորական պաշտոնատար անձանց վրա»: Սազոնովն առաջարկում է Անգլիայի և Ֆրանսիայի համաձայնության դեպքում պայմանավորվել նաև դիմումի տեքստի կապակցությամբ, որ այն որքան հնարավոր է շուտ հրապարակվի, երեք երկրներում էլ՝ միևնույն օրը»:⁹⁵

• Հալեպից գերմանական հյուպատոս Ռյոսլերը ռայխսկանցլեր Բեթման-Հոլվեգին գրում է, որ Ձեթունում առաջացած խռովությունների պատճառներն ուսումնասիրելով ինքը պարզել է, որ դրանք դրսից չեն հրահրված, այլ դրանց ծիլերը ներսում պետք է փնտրել: Եվ որոնք «ավելի քան բավարար են խռովությունները բացատրելու համար»:

«Այս խռովությունը ծնունդ է առել նաև այլ աղբյուրներից: Մարաշում գտնվող հայ զինվորների մի մասը դասալքեց, որովհետև նրանց վատ էին կերակրում և, քանի որ նրանք զեթունցիներ էին՝ չարչարում և վատ էին վերաբերվում նրանց, բացի այդ՝ ինչ-ինչ պատճառներով կառավարությունը քրիստոնյա զինվորներից վերցրեց համազգեստն ու զենքերը...»:

Ձեկուցագրի վերջում հյուպատոսը շեշտում է, որ նահանգապետ Ջելալ բեյն իրեն խորը մտահոգությամբ ասաց. «...Թուրքական կառավարության շրջանում ակնհայտ է, որ հաղթանակ է տարել մի ուղղություն, որը բոլոր հայերին լրիվ անվստահելի կամ թշնամի տարր է համարում»:⁹⁶

• «Մշակի» թիվ 87-ում սեփական թղթակից Աբգար Պայազատը Դիադի-նից գրում է. «Բոլոր հայկական գյուղերից վաղորդեք կազմած ծրագրի համաձայն, զինվորական կարիքների համար աշխատեցնելու պատրվակով, հավաքում են տղամարդկանց և գյուղից հեռու խումբ-խումբ գնդակահարում»:⁹⁷

13 ապրիլի

• Թալեաթը հրահանգում է բոլոր կուսակալներին ձերբակալել իշխանությունների դեմ գեներ վերցնելու ունակ հայերին, լուսանկարել նրանց այդ գեներների հետ, ապա աքսորել՝ կենտրոնական իշխանություններին ուղարկելով նրանց ցուցակները:⁹⁸

• Հալեայից ամերիկյան հյուպատոս Ջեքսոնի ապրիլի 21-ին դեսպան Մորգենթաուին գրած տեղեկագրում նշվում է. «Ապրիլի 13-ին Մարաշի քրիստոնյաները հասկացան, որ 300 (մի քանիսը նշում են 600) մարդկանց ամուսններ մտել են սև ցուցակի մեջ և նրանց դեմ ինչ-որ բան է նախաձեռնվում...»: Այս ավելացվում է, որ վստահելի աղբյուրներից ստացված տեղեկությունների համաձայն «Մարաշի բոլոր քրիստոնյա տղամարդիկ պետք է զորակոչվեն, իսկ նրանց ընտանիքներն աքսորվեն, որպեսզի Մարաշի քրիստոնյաներն ամբողջովին ոչնչանան»:⁹⁹

15 ապրիլի

• Թալեաթի, Էնվերի և Նազըմի ստորագրությամբ Օսմանյան կայսրության բոլոր նահանգապետներին, ընդհուպ՝ գյուղական իշխանությունների ղեկավարներին է ուղարկվում հայերի տեղահանության ու ջարդերի մասին հրահանգը, որտեղ ասվում է. «Հաստավարությունն ու «Միություն և առաջադիմություն» կոմիտեին՝ կանխելու համար որևէ տեղ և որևէ ձևով Հայկական հարցի առաջադրումը և օգտվելով պատերազմական իրավիճակից, որոշեցին վերջնականապես փակել այդ հարցը, հայերին քշել արաբական անապատներ՝ բնաջնջելով այդ խորթ տարրը, համաձայն մեզ տրված գաղտնի հրահանգի»:¹⁰⁰

• Գերմանիայի դեսպան Վանգենհայմը ռայխսկանցլերին գրում է, որ լուրեր են ստացվում երկրում, հատկապես Արևելյան Անատոլիայում, հայ բնակչության դեմ կատարվող բռնությունների և ընդհանրապես՝ հայերի նկատմամբ, ասկա քչնամանքի մասին: Դա նկատվում է հատկապես հայաշատ շրջաններում, որտեղ ժանդարմների ցուցումով զինված թուրք բաշիբոզուկները և ավազակային բանդաները հայերի դեմ զինված կողոպտուներ և ավազակային սպանություններ են կատարում: Օրինակ՝ Մուշի «... հայ գյուղացիներին օգտագործում էին որպես քաշող անասուն ռազմամթերքն ու պարենը տեղափոխելու համար: Շատերը մեռան անմարդկային վերաբերմունքի հետևանքով... Վանի երկու շրջաններում ղեկավարության թողութայամբ կատարվել են իսկական ջարդեր»: Միաժամանակ դեսպանը հրաժարվում է հայերին ի նպաստ քայլեր կատարել և Վանում ու Բիթլիսում հյուպատոսարաններ բացել, քանի որ «Բարձր Դուռը դրանում կտեսնի մեր կողմից իշխանություններին հսկողության տակ վերցնելու փորձ», երբ «կառավարական շրջաններում հայերի հանդեպ անբարենպաստ վերաբերմունքն էլ ավելի է նեղացնում հայերի համար միջամտության ուղիները»:¹⁰¹

• Ադանայի կուսակալ Հագգը, համաձայն Թալեաթի մարտի 25-ի գաղտնի հրահանգի, հրամայում է ձերբակալել կուսակցական հայ ղեկավարներին, լուսանկարել նրանց իրենց մոտ հայտնաբերված ռումբերի ու գեներների հետ և այդ լուսանկարներն ուղարկել ներքին գործերի նախարարություն:¹⁰²

2/15 ապրիլի

• Վանի նահանգի Բերկրիի գավառապետ Ջիա բեյն իր մոտ է կանչում շրջանի քուրդ ղեկավարներին (մուխթար) և խտրոքեն պատվիրում նրանց,

որ շուտով սկսվող հայերի կոտորածի ժամանակ ոչ մի մահմեդական չհամարձակվի իր մոտ որևէ հայի պահել կամ պաշտպանել՝ ասելով, որ «... կարգադրությանը չենթարկվողները հայերի նման կպատժվեն»»:¹⁰³

• Վանի մերձակա Ականց գյուղաքաղաքում թուրքերը զնդակահարում են մոտ 500 հայերի. շրջակա 80 գյուղերում 3 օրվա ընթացքում սպանում են ևս 2400 հոգու:¹⁰⁴

16 ապրիլի

• Վանի մահանգապետ Ջևդեթ բեյը, որ միշտ առիթ էր փնտրում ոչնչացնելու քաղաքի դաշնակցական ղեկավարներ Վռամյանին, Իշխանին և Արամին, օգտվելով Շատախում երկու օր առաջ ծագած հայ-թուրքական ընդհարումներից, Իշխանին և երեք ուրիշ դաշնակցականների ուղարկում է այնտեղ՝ խաղաղություն հաստատելու, բայց ճանապարհին, Հիրճ քրդական գյուղի մոտ բոլորին դավադրաբար սպանում են:¹⁰⁵

• Լոնդոնի համայնքների պալատում Վիլյամսը (բանվորական կուսակցություն) հանդես է եկել հարցադրմամբ, թե արդյոք կառավարությունը չի՞ ուզում քայլեր ձեռնարկել պատերազմից հետո հայերի համար ռուսական կառավարության կողմից լեհերին խոստացած ինքնավարության նման ինքնավարություն ապահովելու նպատակով: Դրան պետական քարտուղարի օգնական Լեյլ Պրիմրոզը պատասխանել է, որ բրիտանական կառավարությունն իր տեսադաշտում կպահի հայ ժողովրդի շահերն Ասիական Թուրքիայում, սակայն պատերազմի ներկա փուլում անհնար է որոշել, թե ինչպիսի՞ն պետք է լինեն միջոցառումները:¹⁰⁶

• Վանի մահանգապետ Ջևդեթ բեյին է ներկայացվում դասալքության վերաբերյալ մի փաստաթուղթ, որտեղ նշվում է, որ բանակից դասալքած հայերի թիվն աննշան է, սակայն կառավարության կողմից հայերի նկատմամբ վարած աղետալոր անվստահությունն ու նրանց գոյությանը սպառնացող մի շարք լուրջ պարագաներ պատճառ են դարձել դասալքություն: «Ձինաթափված հայ զինվորները գրաստի տեղ էին դրվում՝ ստորացնելով նրանց մահմեդականների աչքին... շրջում էին շշուկներ հարյուրավոր զնդակահարված, ջրախեղղ ու դաշունահար արված, անհետ կորած հայ զինվորների մասին... Դասալքության պատճառ էր մաս բոլոր իսլամների, հատկապես քրդերի անխտիր զինումը՝ 16-60 տարեկան... և նրանց հայաբնակ շրջաններում պահելը... Ահա ինչու պետք է դադարեցնել, ըստ իս, այլևս դասալիք բառը գործածել հայ երիտասարդի նկատմամբ, քանի որ նա իր ձեռքում զենք չունի, իսկ անզեն զինվորը դասալիք չի կարող համարվել...»:¹⁰⁷

3/16 ապրիլի

• Վանի գավառի Սարայ գյուղաքաղաքում սպանվում են օսմանյան բանակի հարյուր հիսուն զինաթափված հայ զինվորներ:¹⁰⁸

17 ապրիլի

• Ադանայի կուսակալ Հազգը կրկնում է 3 օր առաջ հղած իր հեռագիրը, որպեսզի ոստիկանության հրամանատարը ձերբակալի հայ հեղափոխական դաշնակցության Ադանայի մահանգի ղեկավարներին ու հանրահայտ այլ հայերի, մեծ չափերով լուսանկարի նրանց՝ իրենց մոտ «գտնված» զենքերով ու նոր ձերբակալվածների անուններն ավելացնելով մախապես աքսորված այլ հայերի անվանացուցակին՝ ներկայացնի կուսակալությանը:¹⁰⁹

• Կովկասի փոխարքայի օգնական Միշլակին թիվ 386 հեռագրով Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սազոնովին տեղեկացնում է Վանի և Բիթլիսի նահանգներում տեղի ունեցած կոտորածների մասին, և նշում, որ փոխարքա Վորոնցով-Դաշկովը չի առարկում, որպեսզի կաթողիկոսն Իտալիայի թագավորին և ԱՄՆ-ի նախագահին դիմի՝ հայերի պաշտպանության համար Բ. Դեմանը միջնորդելու խնդրանքով:¹¹⁰

• Առավոտյան, Իշխանի և իր ընկերների սպանության լուրը Վան հասնելուց առաջ, նահանգապետ Ջեդեթն իր մոտ է կանչում քաղաքի մյուս հայ առաջնորդներ Վոսմյանին ու Արամին: Վերջինս այդ ժամանակ քաղաքում չէր, ուստի Վոսմյանը նրան նամակով նախագգուշացնում է և խորհուրդ տալիս՝ սպասել, իսկ ինքն ընկերների հետ գնում է ու ձերբակալվում:¹¹¹

18 ապրիլի

• Պոլսից տրված հրահանգով Կարինում տեղի է ունենում մեծ հանրահավաք, որի ժամանակ իթթիհատական հռետորներն ու մոլլաները 1914թ. դեկտեմբերի 31-ին Սարիղամիշում թուրքական զորքերի կրած պարտության հիմնական մեղքը բարդում են հայերի վրա՝ պահանջելով բնաջնջել այդ «դավաճան» ազգին:

Նահանգապետ Թահսին բեյը հայերի՝ իրենց պաշտպանելու խնդրանքներին պատասխանում է, որ դա կենտրոնական կառավարությունն է հրահանգել: Իսկ գերմանական հյուպատոս Անդերսն ասում է, որ այդ հավաժանքներն արդարացի են, և ինքը չի կարող միջամտել:¹¹²

• Սկսվում է Ջեյթունի և հարակից գյուղերի հայերի տեղահանությունը: Սկզբում հավաքում են զինվորական տարիքի երիտասարդներին, որոնց միմյանց կապված վիճակում տանում են անհայտ ուղղությամբ, ապա անցնում են մնացած ողջ բնակչությանը՝ աստիճանաբար տեղահանելով կանանց, ծերերին և երեխաներին, ընդհանուր հաշվով մոտ 50000 մարդու:¹¹³

19 ապրիլի

• Սիրիա է հասնում Ջեյթունից գաղթած հայերի առաջին քառավանդը: Այս առիթով ականատեսը վկայում է, որ ամեն օր Ջեյթունից 200-300 հոգի է տարագրվում: Կառավարությունը որոշել է մյուս բոլոր գավառներն էլ դատարկել: «Գնում են զանգվածաբար՝ ծերերը, թույլերը, չորս կամ հինգ տարեկան երեխաները՝ բոկոտն...»:¹¹⁴

• Թուրք հազարապետ Ահմատ բեյը 500 ձիավորներով ու հետևակ զինվորներով մտնում է Վանի նահանգի Կոզլի գյուղը, հավաքում 80 տղամարդ և գյուղապետ Հովսեփ աղայի տան առաջ բոլորին կոտորում: Միաժամանակ նա գյուղացիներին արգելում է դուրս գալ տներից: Սակայն նրանցից տասը հոգի մինչև երեկո կռվում են թշնամու դեմ և վերջում, այրելով տասնչորս տուն՝ իրենց գցում են բոցերի մեջ:¹¹⁵

• Վանի գավառի Աստվածաշեն գյուղում գավառապետն ընտրում է 60 տղամարդ և հանելով գյուղից դուրս՝ բոլորին կոտորում: Իսկ կանանց հավաքում և ենթարկում է դաժան չարչարանքների: Ընդ որում՝ հղիների արգանդները պատռելով՝ երեխաներին հանում և ցցում են սրերի ծայրերին:¹¹⁶

- Սկսվում են Դիարբեքիդի հեղինակավոր հայերի ձերբակալությունները, որոնց ձևական հարցաքննություններից հետո տեղափոխում են կենտրոնական բանտ։¹¹⁷

6/19 ապրիլի

- Վանի գավառի Նորգյուղի քառասուն զինված տղամարդիկ ամբողջ օրը դիմադրում են հարյուր հիսունից ավելի զինվոր-ուստիկաններին և բոլոր գյուղացիներին անվնաս հասցնում Վարազ գյուղը։¹¹⁸
- Վանի Սարալի գավառապետի զլխավորած 500 հեծյալ և 1000-ի չափ հետևակ զինվորներ ու քրդեր սկսում են կոտորել Արճակ գյուղի փողոցներում հանդիպած հայերին. Արճակը դիմում է ինքնապաշտպանության։ Սպանվում են մի խումբ քրդեր, սակայն հիմնական կոիվը սկսվում է հաջորդ օրը։¹¹⁹

20 ապրիլի

- Հալեպից Գերմանիայի հյուպատոսը հեռագրում է Պոլիս, դեսպան Վան-գեմհայմին, որ Մարաշի, Ջեյթունի և շրջակա գյուղերի հայերը՝ առանց բացառության, կառավարության որոշումով տարագրվում են։ «...Ջեյթունից արդեն հեռացվել են 35 ընտանիք, ճանապարհին են երկրորդ և երրորդ խմբերը։ Տղամարդկանց առանձնացնում են կանանցից և ուղեկցում զինվորականների հատուկ ջոկատների հսկողությամբ... 32-ից մինչև 45 տարեկան բոլոր քրիստոնյա տղամարդիկ ստացել են գորակոչի հրաման՝ մպատակը, անշուշտ, նրանց քստրելն է։ Մահմեդականները չեն գորակոչվել։ Կենտրոնական կառավարության միջոցառումներն ակնհայտորեն հենվում են Մարաշից եկող սխալ հաղորդումների վրա։ Այս միջոցառումները դժբախտություն են մի երկրի համար, որի մպատակն է բնակչության կարևոր մասի սխտեմատիկ ոչնչացումը։ Դրանք բխում են այն սխալ ըմբռնումից, ըստ որի ողջ հայ ժողովուրդը դիտվում է որպես անվստահելի և թշնամի...»։¹²⁰

- Մի քանի թուրք զինվորներ փորձում են Շուշանց գյուղից Վան եկող կանանց առևանգել և սպանում են օգնության հասած հայ երիտասարդներին։ Այս դեպքն էլ առիթ է հանդիսանում փոխհրաձգությունների, և Վանում սկսվում են կոիվները։ Նահանգապետը Ջևդեթի 6000-անոց կանոնավոր բանակը, որ մախսուրթ այստեղ էր բերվել ու մահ թուրք և քուրդ ջարդարարները հարձակվում են քաղաքի զենք կրելու ունակ 1500 հայ ինքնապաշտպանների վրա։ Սկսվում է Վանի հերոսամարտը։ Այն տևում է մինչև մայիսի 16-ը, երբ ռուսական զորքը մտնում է քաղաք։ Ինչպես գրում է «Армянский вестник»- ի իր 1916թ. N 18-ում, «Վերջին ամիսներին տեղի ունեցած ծանր իրադարձություններն արդեն լցրել էին համբերության բաժակը, որովհետև Իշխանը և նրա ընկերները դավադրաբար սպանվել էին, երբ նրանք Վանի նահանգապետի խնդրանքով գնում էին Շատախ՝ ըմբոստացած ժողովրդին հանգստացնելու համար, որովհետև Վասպուրականի բնակչությունը այլևս չէր կարող իր երիտասարդությանը բանակ ուղարկել, որտեղ նրանք ենթարկվում էին ծեծի ու սպանությունների... Կովում էին բոլորը՝ մեծից-փոքր։ Ռազմական և քաղաքացիական բոլոր գործերը դեկավարում էր նոր ստեղծված շտաբը, միավորվել էին բոլոր կուսակցությունները»։¹²¹

- Թուրքերը 200 ձիավորներով հարձակվում են Վանի Անկշտանց գյուղի վրա։ Գյուղացիները 20 հոգով օրհասական դիմադրություն են ցույց

տալիս: Մի քանի ժամ տևող կռիվների ընթացքում թուրքերը տալիս են 37 զոհ, ապա նոր ուժեր ստանալուց հետո մտնում են գյուղ և սպանում 60 տղամարդու: Իսկ կանանց սպանում են ծեծելուց և բռնաբարելուց հետո միայն:¹²²

21 ապրիլի

• Վանի գավառի Անգղ գյուղի թուրքական պահակախումբն ու նրանց միացած Խալդը բեյի ստվար ուժերը սկսում են կոտորածը՝ սպանելով 340 հոգու:¹²³

8/21 ապրիլի

• Թմրանոթներով զինված թուրքական մի զորամաս և քրդերը հարձակվում է Վանի Դարման գյուղի վրա, որտեղ հավաքվել էին մոտակա մի քանի գյուղերի զինված պաշտպանները և ծանր զոհեր տալով՝ հետ շարտվում:¹²⁴
• Նույն օրը հարևան Չորավանց գյուղի բնակիչները, որ վստահել էին համագյուղացի թուրքերին, կոտորվում են մոտակա Ջրվանդանց գյուղի թուրքերի ձեռքով:¹²⁵

22 ապրիլի

• Սամսունում թուրք ոստիկանները հայկական թաղամասերում խուզարկություններ կատարելով՝ ձերբակալում են շատ հայերի, որոնց մեծ մասին ուղարկվում են Բաֆրայի ուղղությամբ:¹²⁶
• Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սազոնովը Կովկասի փոխարքայի օգնական Վ. Միշլակուն ուղարկած հեռագրում նշում է, որ ինքն առաջարկել է Վաշինգտոնի և Հռոմի իրենց ներկայացուցիչներին Թուրքահայաստանի ապագա կարգավորման հարցում պաշտպանել Ամենայն հայոց կաթողիկոսի՝ ԱՄՆ-ի և Իտալիայի կառավարություններին ուղղված դիմումը:¹²⁷

23 ապրիլի

• Պոլսի Հայոց պատրիարքարանում տեղի ունեցած «Խառը ժողովի» խորհրդակցական հանդիպման ընթացքում երիտթուրքերի կառավարության՝ հայերի նկատմամբ որդեգրած քաղաքականությունն ու դրանից բխող իրադարձությունները մանրամասնորեն քննարկելուց հետո ընդունվում է Գրիգոր Չոեռայի առաջարկը, որի համաձայն Վի հուշագիր պիտի առաքվեր Բ. Դոռե՝ հաստատելու օսմանյան հայրենիքի նկատմամբ իրենց հավատարմությունը և կառավարությունից խնդրելու, որ նա փոխի իր քաղաքականությունը հայերի նկատմամբ:¹²⁸
• Բանտ են նետվում բոլոր գավառների դաշնակցականների մեծ մասը:¹²⁹
• Թուրքական կառավարությունը հրահանգում է սկսած Պոլսից, ձերբակալել բոլոր հայ մտավորականներին և բոլոր նրանց, ովքեր կարող էին հայերի բնաջնջման միջոցառումների ժամանակ դիմադրության շարժում գլխավորել:¹³⁰
• Թմրանոթներով զինված թուրքական զորքերը գիշերով հարձակվում են Վանի գավառի Ավերակ գյուղում հավաքված 32 գյուղերի 10000 փախստական գյուղացիների վրա և կոտորում 250 հոգու: Սակայն դաշնակցական զործիչ Շիրիմի ղեկավարությամբ հայերին հաջողվում է ոչնչացնել թմրանոթն ու ավելի քան 9000 գյուղացիների լեռներով հասցնել Վան:¹³¹

• Կովկասի փոխարքային կից ղեկավարական հարաբերությունների պաշտոնյա Ստոլիցկան արտաքին գործերի նախարարությանն ուղարկած իր թիվ 490 հեռագրով հայտնում է, որ Վանից Արամի՝ երեք հայերի միջոցով ուղարկած տեղեկության համաձայն «նոր տոմարով ապրիլի 15-ից բոլոր հայերը փակվել են քաղաքի հայկական թաղամասում: Ջևդեթ փաշան ումբակոծում է քաղաքը, արձակվել է 1700 արկ: Մոտակա շուրջ 100 հայկական գյուղերը կոտորվել են, կանայք բռնվել են սարերը,... պաշարված հայերի ուժերը սպառվում են»:¹³²

24 ապրիլի

• Կոստանդնուպոլսում և կայսրության այլ քաղաքներում ապրիլի 23-ի, լույս 24-ի գիշերը ձերբակալվում են հարյուրավոր հայ մտավորականներ, կուսակցական ղեկավարներ ու գործիչներ, հոգևոր առաջնորդներ, առևտրականներ և այլ հանրահայտ հայեր:¹³³

• Խարբերդի նահանգի Չմշկածափ գավառակի շրջակա գյուղերի բնակչությունը տեղահանվում է ու կոտորվում:¹³⁴

• Պոլսում ձերբակալված 270 մտավորականներ աքսորվում են Անկարա: Իսկ Թալեաթը հանգստացնում է պատրիարքին, թե ժողովրդին ոչինչ չի սպառնում. «... կառավարությունը կասկածում էր, որ նրանց մեջ կային անջատողական ծրագրերով մի շարք հայեր, որոնք պետք է չեզոքացվեն, որպեսզի քարոզչությամբ չգրադվեն»:¹³⁵

• "Русские Ведомостя" ամսագիրը ապրիլի 24-ի թիվ 93-ում գրում է. «Վանի նահանգը բռնկված է ապստամբությամբ... Այրվում են հայերի գյուղերը: Ջորահավաքի պատրվակով սարսափելի բաներ են կատարվում: Հայ ազգաբնակչությունն ապրում է ամբողջական կոտորածի մղձավանջի պայմաններում... Բարբարոսությունը սահմաններ չունի...»:¹³⁶

• Կոստանդնուպոլսից Գերմանիայի դեսպան Վանգենհայմը արտաքին գործերի նախարարությանը հեռագրում է, որ Էրզրումի հյուպատոսի ամսի 22-ին հաղորդած տեղեկության համաձայն «Վանում և շրջակայքում բռնկվել են հայկական ապստամբություններ (հավանաբար ռուսական խարդավանքների հետևանքով): Տեղի են ունենում փողոցային կռիվներ, ավերված են հեռագրալարերը, ընդհատված է կապը Պարսկաստանի հետ: Ներքին գործերի նախարարությունը հաստատել է այս ամենի իսկությունը, սակայն խնդրում է առաջիմ գաղտնի պահել այն»:¹³⁷

• Օսմանյան IV բանակի հրամանատար Ջեմալ փաշային ուղարկած հեռագրով Թալեաթը հայտնում է, որ մինչ այդ տեղահանված հայերը ուղարկվել են Կոնիա, բայց հաշվի առնելով այն, որ դրանով հայերի թիվն այնտեղ կարող է աճել, այսուհետև հայերին Կոնիա չեն ուղարկի: «Անհրաժեշտ է դառնում աքսորել Իսկանդերունի, Դյորթ-Յոլի, Հաճնի, Ջեյթունի, Միսի նման բնակավայրերի հայերին, ուստի տեղեկացնում ենք Ձեզ՝ նրանց Հալեայի նահանգի Ջոր կոչվող բնակավայր ուղարկելու մասին հրամանը, ինչի հետ համաձայն է նաև գլխավոր հրամանատարը»:¹³⁸

25 ապրիլի

• Նախապես պատրաստված ցուցակով Կ. Պոլսի ոստիկանությունը սկսում է ամբողջ օրվա ընթացքում ձերբակալել բոլոր հայտնի հայ հասարակական գործիչներին, մանավանդ՝ դաշնակցական ղեկավարներին, որոնց թիվը հասնում է 235-ի:¹³⁹

12/25 ապրիլի

• Վանի Լիմ գյուղի բնակիչները և, որ հավատացել էին տեղացի քրդերին, ամբողջությամբ կոտորվում են: Փրկվում են միայն մի խումբ երիտասարդներ, որ ապաստանել էին Դարման գյուղում: Իսկ հարեվան Ջարանց և Սևան գյուղերի 150-ից ավելի բնակիչների՝ նրանց թուրք և քուրդ հարևանները տանում են մոտակա մի խոր ձոր և քույրին կոտորում:¹⁴⁰

26 ապրիլի

• Նախորդ օրը Պոլսում ձերբակալված ազգի ղեկավար 235 հայտնի հայեր անմիջապես տարագրվում են երկրի խորքերը, որից հետո ձերբակալվում են 600 մտավորականներ և:¹⁴¹

• 24-ի գիշերը կատարված ձերբակալությունների ու դրանց հաջորդած դեպքերի ազդեցության տակ՝ Պատրիարքարանում գումարվում է Խառն ժողովի նիստը, որը լսելով Գրիգոր Ջոհրայի պատրաստած հուշագիրը, ընդունում է այն և որոշում ներկայացնել վարչապետ Սայիդ Հալիմին, որը և մույն օրը հայոց պատրիարքի հետ հանդիպման ժամանակ բացարձակապես մերժում է հայերի նկատմամբ առկա անվստահության գաղափարը և հայտարարում, որ կառավարության վստահությունը չի փոխվել հայ ազգի հավատարմության նկատմամբ: Իսկ Թալեաթը հայտարարում է. «Չեմնարկված միջոցառումներն ուղղված են միայն կուսակցականների դեմ: Հայտնի է, որ պետության դեմ որևէ լուրջ շարժման ապացույցներ չունենք»:¹⁴²

• Էրզրումից Գերմանիայի հյուպատոս Շոյբները հեռագրում է դեսպան Վանգենհայմին, որ Վանից ստացված լուրերի համաձայն «... մինչև խռովության բռնկվելը կառավարությունը ձերբակալել էր հայ երևելիներին, որոնցից Իշխանը և երեք այլ հայեր ոստիկանության հսկողության ներքո տեղափոխվելիս մորթվել են: Շրջափակվել է քաղաքի հայկական թաղամասը: Ոչնչացվել են 250 հայկական տներ»:¹⁴³

• Փարիզում ռուսական դեսպանը Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարությանն է հանձնում ռուսական կառավարության նոտան, որում հայտնվում է, որ հայոց կաթողիկոսը դիմել է Իտալիայի թագավորին և ԱՄՆ-ի նախագահին, որ նրանք Բարձր Դռան առջև հանդես գան ի պաշտպանություն հայերի: Միաժամանակ արտաքին գործերի նախարար Սագոնովը հեռագիր է ուղարկում Փարիզում և Լոնդոնում Ռուսաստանի դեսպաններին՝ Ասիական Թուրքիայում քրդերի և թուրքերի կողմից կատարվող հայերի ջարդերի մասին: «Կայսերական կաբինետը... ենթադրում է, որ ֆրանսիական, անգլիական և ռուսական կառավարությունները պետք է հրապարակեն համատեղ հայտարարություն՝ ուղղված Բարձր Դռանը և անձնական պատասխանատվություն դնեն հայերի դեմ բռնություններ կատարած օսմանյան նախարարների խորհրդի բոլոր անդամների, ինչպես նաև այդ գործողություններում ներգրավված քաղաքացիական և զինվորական պաշտոնյաների վրա...»:¹⁴⁴

• Գերմանիայի դեսպանատունն ուղարկած իր հաղորդագրությամբ դեսպանատան աշխատակից Մորդմանը հայտնում է, որ մույն օրը գեներալ Փոսելդն իրեն ասել է, որ հայերն իրենց խաղաղ կյանքին, եթե թուրքերը նրանց չճնշեն. այստեղ շատ անգամ դեր է խաղում նաև մրցակցության նախանձը: Հայերի վարքն անբասիր է եղել: Միաժամանակ գեներալը բացառել է նաև այն փաստը, թե հայ զինվորները կրակել են իրենց թուրք

ընկերների վրա, քանի որ հայերին միշտ օգտագործել են ռազմաճակատից հեռու՝ քիկուներում:¹⁴⁵

• «Քրդերն ավելի ու ավելի շատ հայեր են կոտորում» վերնագրով տեղեկատվության մեջ «The New York Times»-ը գրում է, որ ռուսական կողմ (Արևելյան Հայաստան) հասած գաղթականները տեղեկացնում են, որ հայերի կոտորածը սարսափելի մեծ չափերի է հասել, որ Վանի շրջանի 10 գյուղերի բոլոր բնակիչները սպանված են: Էրզրումի, Դերջանի, Վանի, Ջեյթունի ջարդերից հետո Ամենայն հայոց կաթողիկոսը դիմում է հղել պրեզիդենտ Վիլսոնին՝ ամերիկյան ժողովրդին կոչ անելով պաշտպանել հայերին:

Թերթը միաժամանակ նշում է նաև, որ «Asossiated Press»-ը տեղեկություններ է ստացել Ուրֆայի 800 և Սալմաստի 720 գյուղերում կազմակերպված կոտորածների վերաբերյալ:¹⁴⁶

• «Քրիստոնյաների մեծ գաղթը» վերնագրով մեկ այլ տեղեկատվության մեջ «The New York Times»-ը գրում է, որ ռուսական զորքերի լքված Ուրմիայից 10000 քրիստոնյաներ գաղթել են՝ շատերն առանց փողի ու հագուստի: 20000-30000 հայեր և աղքեղամական մահանգի բնիկ քրիստոնյաներ փախուստի են դիմել, ճանապարհներին թողնելով շատերին՝ ոմանց սպանված, ոմանց էլ հիվանդությունից մահացած: Ճամփեզրին երեխաներ էին ծնվում: Խելագար մայրերն իրենց զավակներին գետն էին նետում ...

«Գաղթականների մեջ էր գտնվում,- շարունակում է թերթը,- Լուիսիլի Աստվածաբանական սեմինարիայի շրջանավարտ Իսահակ Յոհաննը, որը գրառում էր ամեն օրվա բոլոր իրադարձությունները: Մարդիկ մահանում էին անխռով և առանց ափսոսանքի, և թվում էր, թե կենդանի մնացածները մախանձում էին նրանց»:¹⁴⁷

27 ապրիլի

• Դեսպան Հենրի Մորգենթաուն իր կառավարությանը տեղեկացնում է ապրիլի 24-ին կատարված ձերբակալությունների և դեպի ներքին գավառներ տարագրելու մասին՝ շեշտելով, որ հակահայկական արշավը մասն է կազմում բոլոր ոչ թուրք և ոչ իթթիհատական տարրերի դեմ կազմակերպված շարժման, և կան նշաններ, որ դրան կհաջորդեն սիմիստների դեմ գործողությունները: «Ներքին մահանգներից մույնպես ստացել են հայերի մասին ամնպաստ լուրեր: Գործընկերներս և ես մեծ ջանքեր ենք գործադրում կանխելու համար խժոժությունները և դադարեցնելու համար շարժումը»:¹⁴⁸

• ԱՄՆ-ի պետքարտուղար Բրայենը հեռագրում է դեսպան Մորգենթաունին, որ Ռուսաստանի դեսպանն իրենց է ներկայացրել Կաթողիկոսի դիմումը, որով նա խնդրում է միջնորդել թուրքական կառավարության առաջ՝ կանխելու համար Թուրքիայի տարածքում խաղաղ հայերի կոտորածը: «Խնդրում են, - գրում է պետքարտուղարը, - հարցը ներկայացնել կառավարությանը՝ պնդելով, որ գործուն միջոցներ ձեռնարկվեն այլակրոնների բռնություններից հայերին պաշտպանելու համար: Ռուսաստանի դեսպանը ուշադրություն է հրավիրում այն փաստի վրա, որ ռուսական տարածքում կան բազմաթիվ մուսուլմաններ և նրանք պաշտպանված են կրոնական հալածանքներից»:¹⁴⁹

• Դեսպան Մորգենթաուն պետքարտուղարին ուղղված զեկուցագրում նշում է. «Շարունակվում են դաժանություններն ու խուզարկությունները [Հալեպի] մահանգում, Սվազում ձերբակալվել ու բանտարկվել են բարձր դասի

բոլոր հայերը, որոնց թիվը շուտով կհասնի հինգ հարյուրի: Իրավիճակն օր-օրի ավելի է վատանում՝ սպառնալով հայ ժողովրդի գոյությանը»:¹⁵⁰

28 ապրիլի

- Գրիգոր Ջոհրապը ապրիլի 24-ի գիշերը կատարված ձերբակալությունների կապակցությամբ ապրիլի 26-ին կառավարությանը ներկայացված հուշագրի անհետևանք մնալուց հետո Թալեաթին է ներկայացնում երկրորդ հուշագիրը:¹⁵¹
- Գերմանիայի դեսպան Վանգենհայմը հրահանգում է Կարինի հյուպատոս Շոյբներ-Ռիխթերին՝ խուսափել հայերի պաշտպանությունից և թուրքական իշխանությունների գործունեությանը միջամտելուց:¹⁵²
- Թալեաթը գերմանական դեսպանատան ատաջին թարգմանչին հայտնում է. «Վանում տեղի ունեցավ վատթարագույնը. գործը հասավ իսկական կոիվների և երկու կողմից էլ կորուստները զգալի էին: 400-ից ավելի հայեր զոհվեցին, զինվորականներից էլ հարյուրավոր: Սակայն կարգապահությունը պահպանվեց, այնպես որ ջարդերի մասին խոսք չի կարող լինել...»:¹⁵³
- Դիարբեքիում ձերբակալվում են բոլոր կուսակցական հայերը և ենթարկվում դաժան կտտանքների, ինչի հետևանքով շատերը մահանում են:¹⁵⁴
- Վանի ինքնապաշտպանները Թիֆլիս են ուղարկում իրենց թղթատարի շորերի մեջ կարված մի մամակ, որով հայտնում են. «Վանի նահանգում սպանվել են 6000 հայեր: Վանը և Շատախը եռանդուն կերպով պաշտպանվում են: Արկերը քիչ են վնասել Վան քաղաքին: Մենք վերջին ջանքերն ենք գործադրում: Ամեն օր օգնության ենք սպասում: Աղաչում ենք շտապել: Հետո ուշ կլինի»:¹⁵⁵

29 ապրիլի

- Կոստանդնուպոլսում սկսում են հայերից հավաքել զենքերը, որի ընթացքում իշխանությունները նույնիսկ ստացականներ էին տալիս: Այն շարունակվում է մինչև մայիսի 9-ը:¹⁵⁶
- Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինին իր գործընկեր Մորգենթաուի հետ հանդիպումից հետո, երբ վերջինս հայերի կոտորածները կանխելու համար իրեն էր դիմել բարեխոսելու Մեծ վեզիրի մոտ, արտաքին գործերի նախարար բարոն Բուրիանին գրում է. «Ամերիկյան դեսպանը վերջերս խոսեց ինձ հետ հայկական խռովությունների և Փոքր Ասիայում տեղի ունեցած կոտորածների մասին և կարծիք հայտնեց, որ դրանք շատ վատ տպավորություն կարող են թողնել, երբ Թուրքիայում, որն այժմ Ավստրո-Հունգարիայի և Գերմանիայի հետ միասին է գործում, խռովություններ և հնարավոր հայկական կոտորածներ տեղի ունենան: Պարոն Մորգենթաուն խորհուրդ է տալիս միջնորդել դրա համար Մեծ վեզիրի մոտ և խիստ միջոցառումներ կիրառելով գործը չհասցնել պրովոկացիաների և լուրջ հետևանքների:

Ես բնավ մտադիր չեմ այդ անել, որովհետև, անկախ այն բանից, որ նման խորհուրդներին հազիվ թե ականջ դնեն, իմ կարծիքով Թուրքիան դրանք կընկալի որպես միջամտություն իր ներքին գործերին: Այդպիսի միջամտությունը դաշնակիցների կողմից նրա համար հատկապես տհաճ կլինի»:¹⁵⁷

• Կոստանդնուպոլսից Վիեննա ուղարկված մի ուրիշ զեկուցագրում նշվում է. «Արդեն երկար ժամանակ է, ինչ կատարվում էին հայերի ձերբակալություններ, որոնք այժմ մեծ չափեր և որոշակի բնույթ են ստանում...»

Էրզրումի շրջանում ամիսներ առաջ մի քանի հարյուր հայեր են ձերբակալվել: Իսկ Բորսայում 20 օր առաջ հայ զինապարտները, մինչև 45 տարեկան, գորակոչել և հեռավոր մահանգներ են տարվել: Ստույգ հայտնի չէ նրանց թվաքանակը, բայց հայտնի է, որ այն անցնում է մի քանի հազարից»:¹⁵⁸

30 ապրիլի

• Գերմանիայի դեսպան Վանգենհայմը ռալիսկանցիներ Բեթման Հոլվեգին գրում է, որ ապրիլի 25-ի և 26-ի զիշերները ձերբակալվել են մոտավորապես 500 հայեր՝ հասարակության տարբեր խավերից: Եվ երբ հայ պատրիարքը դրա պատճառների մասին հարցրել է Մեծ վեզիրին և ներքին գործերի նախարարին, նրան պատասխանել են. «Հայ բնակչության համախմբվածությունը քաղաքական կոսակցություններում ներկա պահին կարող է օգտագործվել առանձին ազդեցիկ մարդկանց կողմից հասարակական հանգիստը խանգարելու գործում, և որ պետության բարօրության շահերը պահանջում են այդպիսի դեպքերը կանխելու համար ղեկավար անձանց հեռացնել մայրաքաղաքից...»:

Դեսպանը միաժամանակ հիշատակում է Թալեաթի խոսքերը. «Կառավարությունը վճռել է վերջ դնել մինչայժմյան վիճակին, երբ ամեն մի կրոնական միաբանություն իր «քաղաքականությունն» է վարում և, բացի այդ, կարող է հիմնել և պահել հատուկ քաղաքական միություններ: Այսուհետև Թուրքիայում պետք է վարվի միայն «օսմանյան քաղաքականություն»: Եվ այստեղի հայերի մեջ կան մի շարք քաղաքականապես ոչ լրիվ անվտանգ անձինք... Պահը հարմար է այս բոլոր կասկածելի մարդկանց մայրաքաղաքից հեռացնելու համար: Անշուշտ արտաքսվածների մեջ կան շատերը, որոնք ոչ մի մեղք չունեն: Դա կառավարությունը չի ժխտում, և ինքը՝ Թալեաթը, իր սեփական նախաձեռնությամբ թույլ կտա այդպիսիների վերադարձը»:¹⁵⁹

• Էրզրումից գերմանական հյուպատոս Շոյբները դեսպան Վանգենհայմին զեկուցում է, որ Երզնկայից ստացված հաղորդագրությունների համաձայն «այնտեղի մյութսերիֆն ու ոստիկանությունը բռնություններ և ծանր ճնշումներ են գործում հայ բնակչության դեմ»:¹⁶⁰

• ԱՄՆ-ի դեսպան Մորգենթաուն պետքարտուղար Բրայենին հեռագրում է. «Անդադար տեղեկություններ են ստացվում կայսրության որոշ շրջաններում հայերի նկատմամբ հետապնդումների, թալանի և կոտորածների մասին: Խիստ դիմումներ են կատարվել Հայոց պատրիարքի, Իտալիայի դեսպանի, Բուլղարիայի ներկայացուցչի և իմ կողմից... Այսօր Հալեպի հյուպատոսից ստացված զեկուցագրից պարզվում է, որ թուրքական իշխանությունները Ջեթումի և Մարաշի հայ բնակչության նկատմամբ վարվում են անհավատալի դաժանությամբ և պատճառաբանելով մի քանի հայ դասալիքների գործողությունները, տարագրում և ցիրուցան են անում բազմաքանակ անմեղ բնակչությանը»:

Ինչպես երևում է, այդ միջոցառումները մասն են կազմում ոչ թուրք և ոչ իթթիհատական տարրերի և կազմակերպությունների դեմ ուղղված բռնաճնշումների: Մինչդեռ հեռավոր շրջանների պաշտոնատարները, հնարավոր է, այդ արշավը վարեն ավելի մեծ խստությամբ, քան դա կցան-

կանար կաբինետը: Մեծ վեզիրը, ռազմական և ներքին գործերի նախարարները խոստացել են, որ զանգվածային կոտորածներ կամ ապօրինություններ տեղի չեն ունենա և որ հայերի մի հատված, որոնք դաշնակներ չեն և սխալմամբ են ձերբակալվել, ազատ կարձակվեն: Այսօր առավոտ ես խոսել եմ Իտալիայի դեսպանի հետ և պայմանավորվել, որ նա այցելի Մեծ վեզիրին և հանդես գա է՛լ ավելի խիստ դիմումներով՝ հայերի և այլ ոչ մուսուլմանների պաշտպանության նպատակով»:¹⁶¹

17/30 ապրիլի

• Ականատեսը գրում է. «Հանկարծ, 16 խումբ ոստիկաններ, կարծես նախօրոք չափված, ձևված ու հաստատված ծրագրով, տարբեր ճանապարհներով մտան Ուրֆայի հայոց թաղ, պաշարեցին Մայր եկեղեցին ու հարուստների տները և սկսեցին խուզարկել... իսկ կեսօրից հետո էլ 30-ի չափ հեծյալ ոստիկաններ շտապեցին խուզարկելու քաղաքի մոտ գտնվող զուտ հայաբնակ Կարմուն գյուղը»:¹⁶²

1915

ՄԱՅԻՍ

1 մայիսի

- Թալեաթը ստորագրում է հայերի տեղահանության մասին հրամանը:¹⁶³
- Կ. Պոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինին հաղորդում է իր կառավարությանը. «Այսուհետև պետք է հարմար պահին բարեկամաբար զգուշացնեմ թուրքական իշխանություններին, որ հակահայ իրենց դիրքորոշումով կարող են թշնամիներին ամիս տալ ամբողջ ուժով հանդես գալ Թուրքիայի դեմ»: Նա իր հեռագրում նաև նշում է. «Վաշինգտոնի ռուսական դեսպանը ամերիկյան կառավարությանն առաջարկել է հանձնարարել պարոն Մորգենթաուին թուրքական կառավարությանը լրջորեն բողոքել Հայաստանում տեղի ունեցած կոտորածների կապակցությամբ: Նշելով, որ Ռուսաստանը շատ ավելի մահմեդական հպատակներ ունի, քան Թուրքիան՝ քրիստոնյաներ և, իր այդ հպատակներին Ռուսաստանը լավ է վերաբերվում ու Թուրքիայից ակնկալում է, որ իր քրիստոնյա հպատակների նկատմամբ Թուրքիան էլ նույնը կանի: Այն՝ տեղեկությունների համաձայն, որ ստացել է Մորգենթաուն Վանի շրջանում բազմահազար հայեր են սպանվել: Բացի այդ, աքսորվել են հայկական շատ գյուղերի բնակիչներ»:¹⁶⁴
- Ամերիկյան և իտալական դեսպաններն իրենց կառավարություններից ցուցում էին ստացել հորդորել թուրքական կառավարությանը՝ պաշտպանելու հայերին և հրեաներին: Ի պատասխան դրա Թալեաթը Մորգենթաունին հայտնում է, թե կառավարությունը հրահանգել է զավառային իշխանություններին՝ պաշտպանել անմեղ ժողովուրդին և պատժել հրահանգը չկատարողներին:¹⁶⁵
- Համիդիեների մի հեծելագունը և շրջանի քրդական գյուղերի թալանչի ջարդարարները հարձակվում են Էրզրումի նահանգի Խնուսի գավառակի Մալվորի և Կովանտուկ գյուղերի վրա. սկսվում է ջարդն ու թալանը: Միայն զինված գյուղացիների փոքրիկ խմբերի դիմադրության շնորհիվ անգն բնակչությունը կարողանում է փախչել դեպի հարևան Կարաչոբան գյուղը:¹⁶⁶

• Դիարբեքիդում ձերբակալվում են քաղաքի բոլոր հեղինակավոր հայերը՝ թվով 350 հոգի, որոնց լցնում են հագիվ 40-50 հոգու համար նախատեսված խցերը և սկսում տանջել:¹⁶⁷

• Խարբեքիդում անսպասելի ձևով ձերբակալում ու բանտ են նետում առավել ազդեցիկ և ունեւոր չորս հարյուր հայերի: Բանտում նրանց անմարդկային տանջանքների են ենթարկում՝ պահանջելով հայտնել զենքի պահեստների տեղերը, որոնք գոյություն չունենին: Բանտարկյալներից շատերը՝ չդիմանալով խոշտանգումներին, մահանում են:¹⁶⁸

2 մայիսի

• Ձերբակալվում են Խարբեքիդի նահանգի Արաբկիր քաղաքի բոլոր անվանի հայերը:¹⁶⁹

• Համիդիեների զորախումբը հարձակվում է Խնուս գավառակի Կարաչոբան գյուղի վրա: Նրանց դիմադրում են մի խումբ հայեր՝ սպանելով, ինչպես վկայում է ականատեսը, 69 հոգու: Գազազած մարդասպանները դաժանորեն կոտորում են մնացած բոլոր գյուղացիներին՝ թալանելով ու այրելով ողջ գյուղը:¹⁷⁰

• Կոստանդնուպոլսից Վիեննա ուղարկված մի լրտեսագրում ասվում է, որ քրդերը մեծ թվով հայեր են կոտորել Վանում, Բիթլիսում, Էրզրումում, Դիարբեքիդում: Եվ երբ Պոլսի հայոց պատրիարքը փորձում է այդ առիթով հանդիպել Թալեաթին, մերժում է ստանում:¹⁷¹

3 մայիսի

• Հալեպից գերմանական հյուպատոս Ռ-յոսլերը դեսպան Վանգենհայմին հաղորդում է. «Ձեյթունից և շրջակայքից աքսորվել են հազարավոր, թերևս տասնյակ հազարավոր հայեր: Նրանք պետք է փոխարինվեն Մակեդոնիայից փախած մահմեդականներով:

Միջոցառումը շարունակվում է: Վերջերս ձեռնարկվել են ձերբակալություններ Այնթապում և տնային խուզարկություններ՝ Հալեպում»:¹⁷²

• Չմյուռնիայից ավստրոհունգարական հյուպատոս Գերենտը արտաքին գործերի նախարար Ստեֆան Բուրիանին ուղարկած զեկուցագրում նշում է. «Շաբաթ, լույս կիրակի գիշերը (մայիսի 2-3-ը) ոստիկանությունն այստեղ իր համար քաղաքական առումով կասկածելի թվացող բոլոր հայկական տները խուզարկել է՝ զենք ու զինամթերք հայտնաբերելու նպատակով:

Վերը նշված միջոցառումներն այստեղ մեծ իրարանցում են առաջացրել, քանզի այստեղի հայերը տարիներ շարունակ հանդես չեն եկել քաղաքական պահանջներով և մշտապես ձգտել են տեղական կառավարության հետ լավագույն համերաշխություն պահպանել»:¹⁷³

• Իտալական հյուպատոս Սպորտոնին պատասխանելով Վանի նահանգապետ Ջեդեթին գրում է. «Ձեր նամակից պարզվեց, որ խաղաղ բնակչությունը կառավարության կողմից պաշտպանված է, բայց, դժբախտաբար, հասած լուրերը գյուղերում տեղի ունեցած դաժանությունների մասին են պատմում: Դրանք հայերի վստահությունը լրիվ խախտեցին: Նրանք համոզվեցին, որ կառավարությունը ընդհանուր ջարդերի ծրագիր ունի, և դիմեցին ինքնապաշտպանության...»:¹⁷⁴

4 մայիսի

• Թուրք և քուրդ ջարդարարները հարձակվում են Խնուսի Կարաքյուփի գյուղի վրա և մեկ օրում ամայացնում այն: Գյուղացիների միայն մի փոքր

մասն է կարողանում փախչել ու ժամանակավորապես փրկվել հարևան գյուղի իրենց քուրդ բարեկամների մոտ:¹⁷⁵

• Խնուսի Դուման, Մարութ և Շապատին գյուղերի բոլոր հայերը կոտորվում են իրենց քուրդ համագյուտացիների և նրանց միացած խուժանի կողմից: Դումանում Մուղդատ անունով մի երիտասարդ կարողանում է պաշտպանել իր տունը՝ ոչնչացնելով տասներկու հոգու:¹⁷⁶

5 մայիսի

• Խարբերդում և շրջակա գյուղերում սկսվում են խուզարկություններ ու ձերբակալություններ, իսկ Աղանայի բանտերը լցվում են հայերով:¹⁷⁷

• Կ. Պոլսից Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինին զեկուցում է Վիեննա, որ մինչև այդ մոտ 500 ձերբակալություններ են կատարվել հայ մտավորականության շրջանում, որոնց մեջ էին թուրքերի կողմից բարձր դիրքերի արժանացած հայեր: Նշելով, որ թուրքական կողմը պնդում է, որ հայերն անգլիացիների դրոմամբ խռովություն էին սաղորդում՝ Պալավիչինին գրում է. «Այդ մեղադրանքների մեջ տեղ են գտել չափազանցություններ, որպեսզի այսպես կոչված հայկական խռովություններ ու դրան ուղեկցող թուրքական կոտորածներ առաջացնեն, ինչպես եղան Էրզրումում, Վանում և Կիլիկիայում»:¹⁷⁸

• Անապասելի կերպով պաշարելով Էրզրումի նահանգի Խնուս գավառակի Յուղջամելիք գյուղը՝ քուրդ ջարդարարները կոտորում են գյուղի ողջ բնակչությանը: Պաշարումն այնքան անսպասելի էր, որ գրեթե ոչ ոք չի փրկվում: Միայն դիակների տակ մնացած մի վիրավոր հասնում է հարևան Հարամիկ գյուղ և պատմում, թե ինչպես էին զազանացած քուրդ ջարդարարները սրով, կացնով ու գերանդիներով սպանում առանց բացառության բոլորին ու թալանում ամբողջ գյուղը:¹⁷⁹

• Մամուրեթ-ուլ-Ազիզից գերմանական միսիոներ Յոհաննես Էհմանը դեսպան Վանգենհայմին զեկուցում է, որ մի քանի օր է, ինչ քաղաքում և շրջակա գյուղերում կատարվում են խուզարկություններ ու ձերբակալություններ, պահանջում են հանձնել զենքերը: Բանակ են զորակոչվել 20-ից 45 տարեկան տղամարդիկ: «...Վտանգ կա, որ հայառյայտ գորավոր և ազդեցիկ տարրերը կզերիշխեն և վատթարագույն քայլեր կձեռնարկեն, ուստի խնդրում են հանուն մարդկության շահերի հարկ եղած քայլերը ձեռնարկել՝ կենտրոնական իշխանություններին լուսաբանելու այստեղի իրադրության մասին»:¹⁸⁰

• Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարությանն ուղղված ռուսական դեսպանի նոտայում նշվում է. «Համաձայն Խոյում ռուսական հյուպատոսի հաղորդագրության, Դիվան են գալիս հայ զաղթականներ Վանի և Բիթլիսի վիլայեթներից՝ փրկվելով թուրքական չարագործություններից: Թուրքիայում բախումները քրդերի և հայերի միջև զնալով ուժեղանում են...: Շատախում թուրքերը կազմակերպեցին ջարդեր, Բաշկալում գրեթե ողջ քրիստոնյա արական սեռի բնակչությունը կոտորվեց»:¹⁸¹

6 մայիսի

• Գերմանիայի դեսպան Վանգենհայմը հաղորդում է Բեռլին, որ թուրքական կառավարությունը նախագուշական լայն միջոցառումներ է ձեռնարկել «...հայկական շարժման տարածման դեմ: Կարիևում ձերբակալվել են 200 հոգի: Մեծագույն բնակավայրերից շարունակում են տարագրել հայերին, որոնց տեղը գրավում են մահմեդական զաղթականներ»:¹⁸²

• Խնուսի գավառի Քաղբիկ, Խըռթ, Ենիքյոյ և Եղրդլու գյուղերը ենթարկվում են թուրքերի ու քրդերի անսպասելի հարձակման: Միայն շատ քչերն են կարողանում փախչել-հասնել հարևան քրդական գյուղերի իրենց բարեկամ համարվողների մոտ և հենց այդտեղ էլ անգթորեն սպանվում են:¹⁸³

• Էջմիածնից Գևորգ V կաթողիկոսը հեռագրով խնդրում է Ֆրանսիայի նախագահ Պուանկարեին և Անգլիայի Ջորջ V թագավորին, որպեսզի նրանք դիմեն չեզոք պետություններին՝ հայերի կոտորածները թուրքիայում կանխելու համար:¹⁸⁴

7 մայիսի

• Ակնատեսների վկայությամբ Էրզրումի Խնուս գավառակի Խալչաուշ գյուղի թուրք Սաիդ աղան և գյուղախմբի կառավարիչ (մյուղիթ) Մուստաֆան կեղծ խոստումներով գյուղի բնակչությանը հավաքում են մարագներում և մաս-մաս հանելով կոտորում:¹⁸⁵

• Մանագլերտի թեմի առաջնորդը կաթողիկոսին հղած իր գրության մեջ նշում է. «...արյունարբու օսմանցիներն արյունով ողողեցին Վասպուրականի և Տարոնի գավառները, առանց տարիքի ու սեռի խտրականության մորթեցին ծերերին, երիտասարդներին ու կաթնակեր երեխաներին... Վանի նահանգում հայ չեն թողել, խաղաղ բնակչությունից մոտ 20000 հոգու մորթել են»:¹⁸⁶

8 մայիսի

• Թուրքերն այրում են Վանի գավառի Շուշանց գյուղն ու Վարագա վանքն՝ իր հին ձեռագրերով:¹⁸⁷

9 մայիսի

• Տրապիզոնի նահանգի Սամսոն քաղաքում կառավարությունը զորակոչի է ենթարկում մինչև 50 տարեկան տղամարդկանց և խստորեն նախազգուշացնում դասալիքներին:¹⁸⁸

• Սեբաստիայի նահանգի Թոխատի գավառում սկսվում է համընդհանուր տարագրությունը:¹⁸⁹

• Էրզրումից գերմանական հյուպատոս Շոյբները դեսպան Վանգենհայմին զեկուցում է, որ Վանում կռիվները շարունակվում են և «...մինչև այժմ թուրքերի կողմից կա 1000, հայերի կողմից՝ 3000 սպանված: Այստեղ վերջերս նորից կատարվեցին ձերբակալություններ, 30 հոգու աքսորել են, բացառված չէ, որ նրանք ճանապարհին սպանվել են»:¹⁹⁰

10 մայիսի

• Սկսվում են Տիգրանակերտի 1200 անվանի հայերի ու սիրիացիների (նեստորական և քաղդեացի) ձերբակալությունն ու բռնագաղթը: Նրանց մեծ մասին խեղդում են Տիգրիսի ջրերում, իսկ մյուս մասին՝ քշում Մարդինի ու Մալաթիայի ուղղությամբ:¹⁹¹

• Մի ականատես, որ տեսել էր զեյթունցի տարագիրների Մարաշով անցնելը, մայիսի 10-ին գրում է. «Նրանց տեսա ճանապարհին... դա անվերջ մի թափուր էր՝ ժանդարմների ընկերակցությամբ, որոնք նրանց առաջ էին քշում գավազանի հարվածներով: Նրանք համարյա մերկ էին և ավելի շատ մեկը մյուսին էին քաշկռտում, քան թե քայլում էին: Ծեր կանայք կքվում են, և երբ զափթին գավազանը բարձրացրած մոտենում է, նրանք ոտքի են կանգնում... Այն մարդիկ ովքեր հասել են քաղաք, արդեն երկու օր է, որ ոչ մի բան չեն կերել: Թուրքերը նրանց թույլ չէին տալիս իրենց հետ

որևէ բան առնելու, բացի վերմակից, ջորուց ու այծից... տարագիրներին ստիպեցին իրենց ամբողջ ունեցվածքը Ձեյթունում թողնել, որպեսզի բռնակցի իսլամ գաղթականները, որոնց ուզում են նրանց տեղում բնակեցնել, կարողանան դրանք օգտագործել իրենց կարիքների համար...: Քաղաքը և նրա շրջակա գյուղերն ամբողջովին դատարկվեցին: Շուրջ 25000 տարագիրներից 15-16 հազարը Հալեայի ճանապարհով տարվեցին, բայց պետք է ավելի հեռու գնան՝ Արաբական անապատ...»: ¹⁹²

• Հալեայի գերմանական հյուպատոս Ռյոսերը ռալիսկանցիներ Բեթման Հուվեզին զեկուցում է, որ Ձեյթունում և Մարաշում շարունակվում են հայերի տեղահանություններն ավելի մեծ չափերով, իսկ նրանց բնակավայրերում վերաբնակեցվում են Բալկաններից եկած մահմեդականները: Միաժամանակ նա նշում է, որ թուրքերը հայերին մեղադրում են չստուգված հակաօրինական գործունեության մեջ: «...Կառավարությունը համառոտեմ մնում է միջնադարյան այն տեսակետին, որ մի մարդու կամ մի քանիսի արարքի համար մեղավոր է ողջ ժողովուրդը: Նա իր միջոցառումներով ձգտում է բնաջնջել բոլոր շրջանների հայերին».: ¹⁹³

• Կոնիայի մահաճապետը տեղացի հայերին ու հույներին արգելում է սնունդ տալ իրենց մոտ հասած զեյթունցի տարագրյալներին: Երեք օր անց նա փոխում է իր որոշումը և թույլ է տալիս ուտելիք բաշխել՝ միայն ոստիկանների հսկողությամբ: ¹⁹⁴

11 մայիսի

• Գերմանիայի դեսպան Վանգենհայնը արտաքին գործերի մախարարությանը հաղորդում է, որ համաձայն Էրզրումի գերմանական հյուպատոսարանից ստացված հեռագրի. «...Վանի ճակատամարտերում Թուրքիայի կառավարական գործերը կորցրել են մոտ 1000 մարդ սպանված, իսկ ապստամբները՝ 300: Ապստամբությունը դեռ չի ճնշվել: Էրզրումում տեղի են ունեցել հերթական ձերբակալություններ».: ¹⁹⁵

12 մայիսի

• Օսմանյան կայսրության Ազգային (երեսփոխանական) ժողովի անդամ Վարդգես Միրանկույանը տեսակցություն է ունենում Թալեաթի հետ, վերջինիս բնակարանում, որի ընթացքում Թալեաթը դարձյալ չի կարողանում որպես տարագրության շարժառիթ ցույց տալ դաշնակցականների ունեցած հեղափոխական որևէ ծրագիր: Նա միայն հատուկ շեշտում է, որ այն, ինչ արվում է հայերի դեմ արդյունք է արևելյան մահաճգնություն բարենորոգումների հասնելու նրանց ձգտումների: ¹⁹⁶

• Թալեաթը տեղական իշխանություններին հրահանգում է դատարկել հայկական գյուղերը, գրել դրանց անունները, տեղահանված ժողովրդի թիվն ու նրանց՝ ուղարկված վայրը: ¹⁹⁷

• Լոնդոնում ռուսական դեսպան Բենկենդորֆի՝ արտաքին գործերի մախարար Սազոնովին ուղարկած հեռագրում ասվում է, որ ըստ Նիկոլաոնի, Սալոնիկից ստացված ֆրանսիական մի հեռագրում նշվում է, որ «...հայերը գրավել են Վանը, պայթեցրել քարվանսարան և ավերել քաղաքը: Դրանից հետո թուրքերը նորից գրավել են այն, որից հետո տեղի են ունեցել ջարդեր: Անգլիական կառավարությունն այդ մասին ոչ մի տեղեկություն չունի, բայց եթե ֆրանսիական հաղորդագրությունը հաստատվի, ապա Թուրքիան այդ իրադարձություններում ապացույց կգտնի հաստատելու, թե հա-

յերն ապստամբել են»։ Բենկենդորֆը Նիկոլսոնին ասել է նաև, որ թուրքերի արյունոտ պրոպկյացիաներից հետո հայերին ուրիշ ելք չէր մնում։¹⁹⁸

• Հալեպի ամերիկյան հյուպատոս Ջեքսոնը դեսպան Մորգենթաուին հայտնում է, որ շուրջ 28000 մարդ կառավարության հրամանով տեղահանվել են Ձեյթունից ու Մարաշից և բշվել ոչ քրիստոնյա համայնքների ուղղությամբ, հազարավորները՝ Կոնիա, Կեսարիա, Կաստամոնու, մնացածները՝ Տեր Ջոր-Բադդադ ուղղությամբ։ «Նրանք չեն կարող վաճառել իրենց ունեցվածքը, քանի որ իրենց տալիս են միայն մի քանի ժամ՝ ճանապարհին պատրաստվելու համար, իսկ նրանց տներում կառավարությունը բնակեցնում է մուսուլման ընտանիքներ, որոնք անմիջապես տիրանում են այդ ամենին, հենց որ հայերը հեռանում են։ Հարուստ, աղքատ, բողոքական, գրիգորյան, ուղղափառ ու կաթոլիկ, բոլորը ենթակա են այդ հրամանին... »

Ձեկուցագրում նշվում է նաև, որ բոլորին քշում են տարբեր ուղղություներով, որպեսզի արժանանան մի ճակատագրի, որը ոչ ոք չի կարող գուշակել։¹⁹⁹

14 մայիսի

• Կաթողիկոս Գևորգ V-ը Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովին ուղարկած նամակում նշում է, որ եկեղեցական համայնքը Թուրքահայաստանում ենթարկվում է սարսափելի փորձությունների։ Կրոնը, բոլոր սրբությունները, հայերի ընտանեկան պատիվը պղծվում են թուրքերի և քրդերի կողմից։ Թուրքական ժանդարմները Վանի վիլայեթում գորակոչի պատրվակով հավաքում են հայ տղամարդկանց և զնդակահարում, իսկ կանանց և երեխաներին առևանգում։ Հայտնվում է նաև, որ գործի հաջողության համար և բողոքի նպատակով ինքը ներկայացուցիչ է նշանակել Պոդոս-Նուբար փաշային և ուղարկել Փարիզ և Լոնդոն։²⁰⁰

• Կարաբունարից մի փտահելի ահաճատես հայտնում է, որ մահանգի այդ «...ամենավատառողջ վայրերից մեկն աքսորված վեցից ութ հազար հայերից մահանում էին օրական 150-200 հոգի։ Մահճատենը (մալարիան) մեծ ավերածություններ է գործում նրանց մեջ, որովհետև հայերն ամբողջովին զրկված են սննդից և ապաստանից»։²⁰¹

• Կոստանդնուպոլսից ավատրոհուցարական դեսպան Պալավիչինին արտաքին գործերի նախարար Ստ. Բուրիանին հղած թիվ 347 հեռագրում, որը վերծանվել է Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունում, նշում է, որ մի քանի օր առաջ ինքը հնարավոր էր համարում ձեռնպահ մնալ հայկական հարցին միջամտելուց, սակայն հաշվի առնելով այն քաղաքական նշանակությունը, որ ձեռք է բերել այդ հարցն այժմ, ինքը մտադիր է «...առաջիկա հնարավոր առիթով բարեկամաբար թուրքական պետական գործիչների ուշադրությունը հրավիրել այն անուղղելի հետևանքների վրա, որ առաջ կբերեն ագրեսիվ գործողությունները Հայաստանի քրիստոնյա բնակչության դեմ»։²⁰²

• Դիարբեքիի բոլոր հայկական թաղամասերից բռնի ուժով ձերբակալվում են 300 հայ երիտասարդներ՝ փախստական զինվոր փրկատրելու պատրվակով, չնայած ողջ երիտասարդությունը՝ թվով 10000 հոգի, արդեն ուղարկվել էր քաղաքից 20-25 ժամ հեռավորության վրա գտնվող մի ճամբար։²⁰³

15 մայիսի

• Տեղահանություններ և դրանց հաջորդող ջարդեր են սկսվում Կարինի դաշտավայրում: Տեղահանվածներին տանում են Մամախաթունի ուղղությամբ, որտեղ էլ կոտորում են 30000 մարդ՝ հայտնի ջարդարար Մահտուրեյի գլխավորությամբ, որը մանուկներին լցնում էր փոսերը և կենդանի թաղում:²⁰⁴

• Վանում կռիվը սաստկանում է, և թուրքական թնդանոթներն ուղղվում են ամերիկյան հաստատությունների վրա, որտեղ հավաքվել էր ամբողջ ժողովուրդը:²⁰⁵

• Վանա լճի Ավանց նավահանգստում արտասովոր խուճապ է սկսվում: Թուրքերն ու քրդերը իմանալով ռուսական զորքի առաջխաղացման մասին և՛ որ նահանգապետ Ջևդեթն ու իր շրջապատը հեռացել է Վանից լցվում են նավերն ու փախչում: Խուճապը շարունակվում է նաև հաջորդ օրը: Թուրքերը փախչելով, միաժամանակ հրետակոծում են ամերիկյան միսիոներական հաստատության շենքերը, որտեղ շատ հայեր էին ապաստանել:²⁰⁶

• «Կասկած չկա, որ հայերի ապստամբությունը Վանում առաջացել է կոտորածի պատճառով, այլ ոչ թե հակառակը,- գրում է Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սագոմոլը Լոնդոնում ռուսական դեսպան կոմս Բենկենդորֆին,- որովհետև հայերի համար իմաստ չունեն նախքան մեր զորքերի գալը թուրքերի և քրդերի գերազանցող ուժերի դեմ շարժում սկսելը»: Նույն միտքն է արտահայտել նաև Կ. Պոլսում ավստրոհունգարական դեսպանության զինվորական կցորդ Պոմյանովսկին իր «Օսմանյան կայսրության անկումը» գրքում. «Ապստամբությունները Ջեյթուն և Վան քաղաքներում հայերի հուսահատ գործողություններ էին, որոնք տեսան, որ համընդհանուր ջարդ է սկսվել և շուտով իրենց հերթն էլ է գալու»:²⁰⁷

• Կոստանդնուպոլսից Բուլղարիայի լիազոր-նախարար Կոլուշկը վարչապետ Ռադոսլավովին 1915թ. հունիսի 27-ին ուղարկած զեկուցագրում, ըստ իրենց սեփական թղթակիցների հաղորդագրությունների, նշվում է, որ Մուշում «...կառավարությունը քաղաքի թուրք բնակչությանը զենք է մատակարարում՝ անհրաժեշտության դեպքում հայերին կոտորելու համար: Մուշի և Բիթլիսի շրջաններում կատարյալ անտիրություն է: Քրդերը օրը ցերեկով սպանում են ու թալանում... չկա ոչ կյանքի, ոչ ունեցվածքի ապահովություն: Համընդհանուր կոտորածի լուրջ վտանգ կա: Որքան ռուսական զորքերը մոտենում են, այնքան կառավարության հրամանով կոտորվում են հայերը: Այսպես՝ Բուլանըլում ոչնչացվեցին շատ գյուղեր, Ախլատի բոլոր գյուղերը՝ Արճնշ, Ալիջհագ, Թաղվան, Ուրդան (Վանի նահանգ): Մոսկվայի տեղեկություններ են հասնում Դիարբեքիից. հայերի մասնակի ջարդեր, ձերբակալություններ, քանդված հայկական գյուղեր և այլն: Չգալի թվով հայեր են սպանվել, որպես «Դաշնակցություն» կոմիտեի անդամներ»:²⁰⁸

16 մայիսի

• Հայերի տեղահանությունից հետո, նրանց թողած գույքը տնօրինելու համար թուրքական կառավարությունը կազմում է 34 հոգվածից բաղկացած մի կանոնադրություն:²⁰⁹

• Շարունակվում են ջարդերը Էրզրումի նահանգի Խնուս գավառակում, որտեղ կար 10000 հայ բնակչություն՝ 38 գյուղերով: Բոլոր տղամարդիկ սրի են քաշվում, միայն 400-500 հոգի են կարողանում մի կերպ փախչել ռուսա-

կան տարածք: Ռուսների հնուս մտնելուց հետո պարզվում է, որ այստեղ մնացել են 3000 հոգի՝ կանայք և երեխաներ:²¹⁰

• Ինչպես պատմել են մարիկացի միսիոներներն ու հայ ակամատախները (Ռշտունի), թուրք կանանց ու երեխաներին հայ զինվորները տանում էին ամերիկյան դպրոց՝ ասելով. «Մի լացեք, մեր գործը միայն Ջալեթի հետ է, որը մեր և ձեր տունը քանդեց...»: Իսկ միսիոներ Յարոն, տեսնելով, թե ինչպես են հայերը փորձում հանգցնել թուրքերի այրվող հիվանդանոցն ու օգնում հիվանդներին, ասել է. «Հիանում եմ հայերի ինքնագաղթման վրա, որովհետև հակառակ, որ թուրքերը ոչ մի հայի չլսնայեցին, նրանք օգնում էին մեզ փրկելու թուրքերին: Մի բան, որ չեմ հավատա, թե եվրոպացիները կանեին»:²¹¹

• Էրզրումից հյուպատոս Շոյբներ-Ռիխտերը դեսպան Վանգենհայմին գրում է. «Շրջակայքի ողջ հայ բնակչությանը՝ Մամախաթուն և այլ տեղեր արտաքսելու միջոցառումները տեղի են ունենում բանակի գլխավոր հրամանատարի հրամանով և հիմնված են ռազմական նկատառումներով:

Քանի որ հայ տղամարդիկ զորակոչվել են ծառայելու աշխատանքային գումարտակներում, քշում են հիմնականում կանանց ու երեխաներին, ընդ որում նրանք ստիպված են թողնել իրենց ունեցվածքը: Այստեղի հայերի կողմից ապստամբություն չի սպասվում, ուստի այս դաժան միջոցառումն անհիմն է և վրդովնուճք է առաջացնում...»²¹²

• Բուլղարական դեսպանատան լիազոր-նախարար Ն.Կոլուշևը Պոլսից հաղորդում է. «...Կառավարությունը կարգադրեց զորակոչել 17-ից մինչև 51 տարեկան բոլոր հայերին: Բասենլերի շրջանն արդեն վերածվել է անապատի: Որոշ գյուղերի կենդանի մնացած բնակիչները տեղահանվել և քստրվել են երկրի խորքեր: Երեկ սկսվեց նաև Էրզրումի գյուղերի բոլոր հայերի տեղահանությունը»:²¹³

• Ադանայում ամերիկյան առաքելության ղեկավար Վիլյամ Չեյմբերսը Մերսինի ամերիկյան հյուպատոս Էդուարդ Նաթանին գրում է, որ իրենց մոտ էլ իրավիճակը նույնն է, ինչպես ողջ երկրում. «Տեղահանությունը կատարվում է շատ ծանր պայմաններում, օր ու գիշեր ոստիկանները խուզարկում են հայերի տները: Մարդիկ ապրում են աննկարագրելի վախի ու սարսափի պայմաններում...»:²¹⁴

17 մայիսի

• Ռուսների դեսպի Վան շարժվելու լուրից սարսափահար՝ թուրքերը խուճապի են մատնվում և սկսում են փախչել քաղաքից: Հայերը, առիթից օգտվելով՝ անցնում են հարձակման և գրավում նրանց խրամատներն ու զորանոցները:²¹⁵

• Փարիզում ռուսական դեսպան Իզվոլսկու՝ արտաքին գործերի նախարար Սազոնովին ուղարկած հեռագրում հայտնվում է, որ այնտեղ եկած բժիշկ Ջավրիկը ներկայացրել է արտաքին գործերի նախարարությունում իր զրույցների արդյունքների մասին մի հիշարժան գրություն, որտեղ ասված է, որ Ռուսաստանը մտադիր է առաջարկել պետություններին Թուրքիայի սահմաններում ստեղծել ինքնավար Հայաստան՝ Թուրքիայի, Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի հովանավորության տակ: Հայաստանի տարածքում պետք է լինեն ոչ միայն հայկական բոլոր նահանգները, բացառությամբ մի շարք ծայրամասային շրջանների, այլև Կիլիկիան՝ միջերկրածովյան Մերսին նավահանգստով:²¹⁶

18 մայիսի

• Վան է մտնում ռուսահայ կամավորների առաջապահ գումդը: Այդ ժամանակ քաղաքն արդեն հայերի ձեռքում էր: Նրանք գրավել էին Վանի հնադարյան ամրակուռ բերդը և պարզել հայկական եռագույնը:²¹⁷

• Կարինից Գերմանիայի հյուպատոս Շոյբները դեսպան Վանգենհայմին գրում է. «...Արտաքսված հայերի շրջանում ահավոր թշվառություն է տիրում: Հազարավոր կանայք և երեխաներ առանց սննդի կուտակվել են քաղաքի շրջակայքում: Այս անիմաստ արտաքսումը մեծ զայրույթ է առաջացնում»:²¹⁸

• Սկսվում է Թերջան հասած Կարնո դաշտի 25000 հայերի կոտորածը, որը տևում է մինչև մայիսի 22-ը:²¹⁹

• Նույն օրը սկսվում է դատարկվել նաև Էրզրումի նահանգի Բաբերդ քաղաքը, երբ արդեն մայիսի 15-ին սպանվել էին քաղաքի հոգևոր առաջնորդն ու ութ այլ երևելիներ:²²⁰

• Սկսվում է Էրզրումի գավառի Քոյի գավառակի Խուլիս գյուղի ինքնապաշտպանությունը, որը տևում է մինչև մայիսի 25-ը:²²¹

• Թալեսթը Ադանա հղված մի հեռագրով հրամայում է տեղի հայերին ցրել Հալեպի գյուղերում:²²²

• Ադանայից գերմանական հյուպատոս Բյուզեն դեսպան Վանգենհայմին գրում է. «Հարյուրավոր ընտանիքներ արտաքսվել են, բանտերը լեփ-լեցուն են: Այսօր վաղ առավոտյան կրկին տեղի ունեցան մահապատիժներ:

Իր բարբարոսական գործունեությամբ իշխանությունն ակնհայտորեն վնասում է երկրի շահերին: Գերմանական Արևելյան բանկը, որը զգալի վնաս է կրել, ինձ խնդրեց միջնորդել, որ դադարեցվի հայերի արտաքսումը»:²²³

• Մերսինից ամերիկյան հյուպատոս Նաթանը դեսպան Մորգենթաուին գրում է, որ 70-ից ավել նշանավոր հայ ընտանիքների Մորանայից տեղահանվելու հրաման է տրվել: Նույնն է տեղի ունեցել նաև Մերսինում և Տարսոնում: Գիտակցելով, որ տեղահանությունը տեղական բնույթ չի կրում՝ Նաթանը խնդրում է ամեն ինչ անել դժբախտ գաղթականների վիճակը թեթևացնելու համար:²²⁴

• Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սազոնովը Ֆրանսիայում իրենց դեսպան Իզվոլսկուն, տեղեկացնելով բժիշկ Ջավրիևի հետ տեղի ունեցած իր հանդիպումների մասին, որոնց ընթացքում քննարկվել են ապագա հայկական մարզում Կիլիկիան և ներառելու հարցը, գրում է. «...Նրան պատասխան տրվեց, որ մենք չենք կարող այդ ցանկություններին ընդառաջել՝ նկատի ունենալով Ֆրանսիայի շահերի գերիշխումը Կիլիկիայում»:²²⁵

• Դեկավարվելով Թալեսթից ստացած հրամանով Էրզրումի նահանգապետը հրահանգում է նահանգի ողջ բնակչությանը աքսորել Տեր-Ջոր:²²⁶

19 մայիսի

• Խնուսում թուրքերն առանց տեղահանության փորձի սկսում են կոտորել հայերին, իսկ Կարնո դաշտի հարյուր գյուղերի բնակիչներին տեղահանում և արդեն ճանապարհին էին կոտորում:²²⁷

• Ռուսահայ կամավորները՝ ռուսական բանակի զինվորների հետ միասին Վանա լճից արևելք ընկած տարածքը թուրքական զորքերից մաքրելուց հետո մտնում են Վան:²²⁸

• Կոստանդնուպոլսում Բուլղարիայի լիազոր-նախարար Ն. Կոլուշևը նախարարների խորհրդի նախագահ դոկտոր Ռադոսլավովին գրում է. «Իրադրությունը գնալով ավելի է վատանում: Անմարդաբնակ են դարձել Բասենլերի բոլոր գյուղերը: Ավելի քան 15000 հայեր Էրզրումի դաշտի գյուղերից արտոլվել են կայսրության խորքերը՝ բացառությամբ 17-ից 51 տարեկան տղամարդկանց, որոնց պահում են զինվորական կարիքների համար:

Լքված գյուղերը թալանված կամ վերաբնակեցված են թուրք եկվորների կողմից, որոնք ազատ են ամեն տեսակի բռնություն գործադրելու: Ճանապարհին դժբախտ արքայականները իթթիհատի կազմակերպած ավազակախմբերի կողմից առավել անխղճությամբ թալանվում են... Կանայք, աղջիկներ, երեխաներ, ծերեր հանձնված են ժանդարմների, պաշտոնյաների, բաշիբոզուկների ողորմածությանը, որոնք ամեն տեսակի բռնություններ են գործում: Գյուղերում կանանց բռնաբարություններն ու առևանգումները սովորական բնույթ են կրում: Մի մայր հուսահատության պահին իր նորածին երեխային գցել է Արաքսը...

Իթթիհատական շատ ղեկավարներ, ինչպես Հալիմ բեյը, դոկտոր Բեհանդդին Շաքիրը և նախկին պատգամավոր Սերֆուլլահը, Էրզրում եկան կազմակերպված ավազակախմբերով: Նահանգապետ Թահսին բեյը արդարացում է իր բոլոր գործողությունները հայտարարելով, որ հրամանը տրված է Պոլսից»:²²⁹

• Կոստանդնուպոլսում Ավստրո-Հունգարիայի զինվորական կցորդ Կվյատկովսկին իր թիվ 329 վկայագրում ^{նշում է}. «Հայկական հարցը կառավարության համար մեծ վտանգ կարող է ներկայացնել: Հայ ազգաբնակչության մեծ մասի արքայի պատճառով Թուրքիայի ապական ողջ տարածքը զրկվել է իր աշխատասեր բնակչությունից, և տնտեսական կյանքն այնտեղ կաթվածահար է եղել:

Հայերի արքայի ժամանակ կիրառվող անմարդկային վարվելակերպը դրդել է ամերիկյան, գերմանական և ավստրոհունգարական դեսպաններին Բարձր Դռանը բողոք ներկայացնել:

Թուրքական կառավարությունն այս արքային ձեռնարկել է ոչ թե հայկական ապստամբությունը ճնշելու, այլ Մակեդոնիան և Լիբիան կորցնելու հետևանքով հացից զրկված անթիվ թուրք պաշտոնյաներին ապահովելու համար»:²³⁰

20 մայիսի

• Ռուսական բանակի զինծառայող Վ.Շչերբինի՝ արտաքին գործերի նախարարություն ուղարկած նամակից պարզվում է, որ զորքերը ժամանակին օգնության հասան Վանի պաշտպաններին, որոնք իրենց վերջին օրերն էին ապրում: Վանի հայ բնակչությունը ցնծությամբ էր դիմավորում ռուսական ջոկատին՝ ծաղիկներով, աղ ու հացով, հանձնելով քաղաքի բանալիները:

«Չեմ ուզում մանրամասն նկարագրել, - գրում է Շչերբինը, - այն սարսափելի բռնությունների և զազանությունների տեսարանները, որոնք թուրքական կառավարության ցուցումով կատարել էին քրդերն ու ասկյարները երկրամասի անպաշտպան հայ բնակչության նկատմամբ: Մենք ականա տեսնում էինք կանանց, տղամարդկանց, երեխաների և ծերերի՝ կտրտված ձեռքերով ու ոտքերով, հանված աչքերով դիակների կույտեր: Դա զարհուրելի մի տեսարան էր...»:²³¹

• Վանից թուրքերի փախուստից հետո ռուսական զորքերի հրամանատար գեներալ Նիկոլաևը ճանաչում է Արամ Մանուկյանի ղեկավարած հայկական ժամանակավոր կառավարությունը և ստանում քաղաքի բանալիները: Դրանք հանձնելով ռուս զորավարին Արամ Մանուկյանն ասում է. «Երբ մենք մի ամիս առաջ զենք վերցրինք, չէինք ենթադրում, որ ռուսները կգան: Այն ժամանակ մեր վիճակն անհույս էր: Մեզ միայն մի ընտրություն էր մնում՝ կամ հանձնվել, որ մեզ ոչխարի պես մորթեին կամ մարտում կռվի երաժշտության տակ մեռնել: Մենք ընտրեցինք վերջինը...»:²³²

• Սկսվում են տեղահանությունները Սեբաստիայի նահանգի Շապին-Գարահիսարի գավառի Թամարգա գյուղաքաղաքի Ինջիսու և մյուս գյուղերում ու շարունակվում են մինչև մայիսի 25-ը: Բոլորին աքաղում են Սիջագետք:²³³

• Մանազկերտի թեմի առաջնորդական փոխանորդ Հովհաննես քահանա Տեր-Ավետիսյանը կաթողիկոս Գևորգ V-ին ուղարկած նամակում գրում է. «...Արյունաբոս օսմանցիները արյունով ողողեցին Վասպուրականի ու Տաթևի գավառները, առանց տարիքի և սեռի խտրականության մորթեցին ծերերին, երիտասարդներին ու կաթնակեր երեխաներին... Վանի նահանգում հայ չեն թողել, մորթել են մոտավորապես 20000 խաղաղ բնակչությանը»:²³⁴

• Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինին արտաքին գործերի նախարար Ստ. Բուրիանին գեկուցում է. «Հավաստի աղբյուրներից տեղեկացա, որ իրադրությունը հայերով բնակեցված վայրերում, ինքը, անբարենպաստ է: Հատկապես Վանի շրջանում իսկական մի հեղափոխություն է բռնկվել, որը թուրքերն ուզում են արյան մեջ խեղդել:

Բուն Կոստանդնուպոլսում, կարծես մտադիր են հայ վերնախավին (երևելիներին) նախապես ձերբակալել: Այնուամենայնիվ այստեղ շարունակում է իշխել ուժեղ անվստահությունը հայերի նկատմամբ, ինչին վերջիններս ամբողջապես դեմ են:

Իմ ամերիկացի գործընկերը [Մորգենթաուն] վերջերս նորից փորձել է ինձ հայերի օգտին տրամադրել, սակայն ես բացատրեցի նրան, որ այժմ ի վիճակի չեմ այս ուղղությամբ որևէ բան անել»:²³⁵

• Սկսվում է Էրզրումի նահանգի Խնուս քաղաքի ու գավառակի 27 հայկական գյուղերի ողջ բնակչության տեղահանությունը, իբր՝ դեպի Մուշի Վարդ գավառակ: Խնուսի հայերին հանկարծակիի բերած այս հրամանը պատճառաբանվում էր նրանց ռազմական գործողությունների շրջանից հետո պահելու մտադրությամբ: Սակայն նրանք բոլորն էլ՝ 1700 ընտանիք, կոտորվեցին Էրզրումի նահանգի Բասկան գյուղից դեպի Չափանի լեռներ ձգվող կամուրջի մոտ: Նրանց թվում էր Ուրֆայի արքեպիսկոպոսն ու երեք ուրիշ հոգևորականներ: Սարսափելի այս նախճրից, որն ականատեսների վկայությամբ տևել է վեց ժամ, փախչելով և թաքնվելով կարողացել են փրկվել միայն 300 կին:²³⁶

• Գերմանացի սպա, փոխգնդապետ Շտանգեն Պոլսի գերմանական զինվորական միսիային օգոստոսի 23-ին գրած գեկուցագրում գրում է. «Մայիսի 20-ին գլխավոր հրամանատար Քեմալ փաշան հրամայեց Էրզրումի հյուսիսային մասի գյուղերը մաքրել հայերից, որը թուրք պաշտոնյաների կողմից կատարվեց ամենադաժան ձևով: Մարդկանց կարճ ժամանակամիջոցում հանեցին իրենց տներից, բակից ու դաշտից և բոլորին արտաքսեցին...»:²³⁷

21 մայիսի

• Վարդգեսն այցելում է ոստիկանապետ Պետրի բեյին «Ազատամարտի» խմբագրությունից վերցրած փողերի հարցով և ձերբակալվում: Այդ նույն ժամանակ իր տանը ձերբակալվում է նաև Ջոհրապը: Նրանք գիշերով փոխադրվում են Կոնիայի ուղղությամբ:²³⁸

• Ջմյուտոնիայում Ավստրո-Հունգարիայի հյուպատոս Գերենտի՝ արտաքին գործերի նախարար Բուրիանին ուղարկած գեկուցագրում նշվում է. «Հայերի տներում խուզարկությունները շարունակվում են եռանդուն կերպով: Բազմաթիվ կալանավորվածներից մինչև հիմա մոտ 50 անձ է կալանքի մեջ թողնվել... Հայկական կողմը պնդում է, որ բանտերում գտնվող իրենց անմեղ ազգականները ենթարկվում են դաժան տանջանքների, որի պատճառով էլ ոչ ճիշտ խոստովանություններ են կատարում...»:²³⁹

• Ամերիկյան միսիոներ, պատվելի Ջ. Մերիլը Հալեպի իրենց հյուպատոս Ջեքսոնին Մարաշից հունիսի 14-ին ուղարկած նամակում նշում է, որ մայիսի 21-ին տեղի ունեցավ Ձեյթունի և շրջակա գյուղերի գրեթե ողջ բնակչության տեղահանությունը «...թեթևակի նախագծուշացումից հետո կամ նույնիսկ առանց նախագծուշացման, այնպես որ մարդիկ դուրս եկան երկար ճանապարհորդության, չիմանալով դեպի ուր են գնալու և առանց պատրաստված լինելու և շատ անտեղի տառապանքներ կրեցին... Կանայք ու երեխաները ժամեր շարունակ քայլում են ոտաբոբիկ, մորածինները մեռնում են մայրերի մեջքին...», ճանապարհին նրանց կողոպտում էին տեղի բնակիչները «...որոնց մոտենալու դեպքում ուղեկցող զինվորները չէին միջամրտում»:²⁴⁰

• Փարիզի ռուսական դեսպանը Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարությանն է հանձնում դաշնակցության հայկական կոմիտեի Ռուսաստանը արտաքին գործերի նախարարությանը հղած հեռագիրը, որում ասվում է. «Հայաստանում թուրքական վերջին չարագործությունները սպառնում են ոչնչացնել ազգին՝ կրկնելով 1895 թվականի ջարդերը:

Մենք ստիպված ենք դիմել Նորին գերագանցության կառավարության օգնությանը՝ հանուն մարդասիրության խոչընդոտելու համար այդ արհավիրքին, անձնական պատասխանատվության կանչելով թուրքական նախարարներին»:²⁴¹

22 մայիսի

• Երիտասարդ թուրքերի կուսակցության Պուսի «Նուրը Օսմանիե» կենտրոնում բացվում է Մասնավոր կազմակերպության խառը ժողովը, որի ընթացքում Թալեաթը ներկայացում է հայերի տեղահանման ձևերի ու ընթացքի, լքված ու լքվելիք գույքի, տների ու գյուղերի տնօրինման վերաբերյալ մի ընդարձակ տեղեկագիր:²⁴²

23 մայիսի

• Թալեաթը մի ծածկագիր է ուղարկում ենթակա իշխանություններին, որտեղ ասվում է. «Դատարկվող գյուղերի բնակչության տեղահանության և զանազան գործողությունների ծախսերը պետք է հոգան նրանց ուղարկված վայրի գաղթականների հատուկ գանձարանից: Եթե բավարար գումար չկա՝ անհրաժեշտ ծախսի չափը հեռագրով պետք է հայտնել և փոխանցագիր պահանջել, որի հաշվեցույցը երեք ամիսը մի անգամ ուղարկել ներքին գործերի նախարարություն»:²⁴³

• Մեկ այլ հեռագրով Թուրքիայի ներքին գործերի նախարարությունը նահանգների համապատասխան իշխանություններին է ուղարկում «Թշնամիներից պաշտպանող քրիստոնյաների, ինչպես նաև նրանց հետ համագործակցող մուսուլմանների նկատմամբ կիրառվող միջոցառումների մասին» վերնագրով մի հրահանգ, համաձայն որի նման անձանց պետք է հանձնել զինվորական դատարան: ²⁴⁴

24 մայիսի

• Դաշնակից տերությունները՝ Ռուսաստանը, Ֆրանսիան և Անգլիան Բ. Դռանն են ներկայացնում համատեղ մշակված մի հայտարարություն, որտեղ ասված է.

«Վերջին ամսվա ողջ ընթացքում Հայաստանում կատարվում է հայերի ջարդ՝ քրդերի և թուրքերի կողմից, օսմանյան իշխանությունների բացահայտ թողությունամբ, իսկ երբեմն էլ՝ ուղղակի օժանդակությամբ: Նոր տոմարով ապրիլի կեսերին հայերի ջարդ է տեղի ունեցել Էրզրումում, Դերջանում, Էգինում, Բիթլիսում, Մուշում, Սասունում, Ջեթրունում և ամբողջ Կիլիկիայում, գլխավին կոտորվել են Վանի շրջակայքի հարյուր գյուղերի բնակիչները, բուն Վանում հայկական թաղամասը պաշարվել է քրդերի կողմից: Միևնույն ժամանակ Կոստանդնուպոլսի թուրքական կառավարությունը բանտարկության և չտեսնված ճնշումների է ենթարկում խաղաղ հայ բնակչությանը:

Ելնելով Թուրքիայի կողմից մարդկության և քաղաքակրթության դեմ կատարված նոր հանցագործություններից Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի դաշնային կառավարությունները սրանով հրապարակայնորեն հայտարարում են Թուրքիայի կառավարությանը, որ իրենք այս հանցագործությունների անձնական պատասխանատվությունը դնում են թուրքական կառավարության բոլոր անդամների, ինչպես նաև նրա տեղական ներկայացուցիչների վրա, որոնք հանցակից կգտնվեն այս կոտորածին»: ²⁴⁵

• Տիգրանակերտում թուրքերը սպանում են 614 հայերի: ²⁴⁶

• Բուլղարական դեսպանատան լիազոր նախարար Կոլուշևը գրում է. «Դյորթ-Յուլից 300 ընտանիքներ տեղահանվել և ուղարկվել են Հալեպ, Հասանբեյլիից ձերբակալված հայերը սպանված են բանտում: Հայերին գնդակահարվելու սպառնալիքով արգելված է քաղաքից դուրս գալ: Մեզ հայտնում են, որ տեղի հայրապետի փոխանորդը մավթ խմելով ինքնասպան է եղել, որպեսզի չստորագրի իշխանությունների կողմից թելադրված հայտարարությունը այն մասին, որ իբր բանտում գտնվող հայերը մահացել են բնական մահով: Տագմապալի լուրեր են հասնում նաև Խարբերդից: Հյուսնիմանսուրի հայկական եկեղեցում ժանդարմները սուրբ հաղորդության բաժակը զուգարան շարտելուց հետո ծաղրոծանակի են ենթարկել եկեղեցական ծեսերը, Հիսուս Զրիստոսի և քրիստոնեական եկեղեցու հասցեին ուղղելով աստվածաանարգ արտահայտություններ: Քահանան տարվել է բանտ և ենթարկվել անասելի տանջանքների: Լուրեր են շրջում, թե բազմաթիվ հայ ընտանիքներ տեղահանված են Քեսաբից [Միրիա]: ²⁴⁷

• «Դաշնակիցները պետք է պատժեն մարդասպան թուրքերին» վերնագրով տեղեկատվության մեջ "The New York Times"-ը գրում է, որ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կողմից այդ երեկո տարածվել է միացյալ պաշտոնական մի հայտարարություն: Նրանք զգուշացնում են օսմանյան բարձրագույն իշխանությանը, որ վերջինս պետք է պատասխան տա հայկական ջարդերի համար: ²⁴⁸

• Մեկ այլ՝ «Կոտորած մեծ ծավալով» վերնագրով տեղեկատվության մեջ «The New York Times»-ը գրում է. «Պատերազմի սկզբից առ այսօր թուրքերն ու քրդերը մեծ թվով հայեր են ոչնչացրել: 1895-96 թվականները կարծես վերադարձել են»:²⁴⁹

25 մայիսի

• Ռուսական զորքերը գրավում են Ոստանը՝ Վանա լճի հարավ-արևելյան հատվածը և կտրում կապը Խալիլ բեյի բանակի ու Կարիհի միջև:²⁵⁰

• Ուրֆայից դեպի հյուսիս, Կարաքեո բնակավայրից ոչ հեռու կոտորվում են թուրքական բանակի 1500 զինաթափված հայ զինվորներ:²⁵¹

• Երիտթուրքերի կուսակցության կենտրոնական կազմակերպության խառը ժողովը որոշում է հայերի տեղահանության ու ջարդերի իրականացման կարգը:²⁵²

• ԱՄՆ-ի դեսպան Մորգենթաուն պետքարտուղարին գրում է, որ Էրզրումի մահանգի Երզնկա, Քղի և Բաբերդի գավառները բռնի տեղահանության հետևանքով լրիվ ամայացել են, իսկ «...Էրզրումի հայ բնակչությունը հրահանգ է ստացել հեռանալ քաղաքից: Նրանք պետք է տեղահանվեն խմբերով: Հաղյուր վաթսույն վաճառականներ արդեն տեղահանվել են իրենց ընտանիքներով: Կառավարությունը բռնագրավել է նրանց ունեցվածքը: Մենք տեղեկություն չունենք տեղահանվածների մասին: Ասում են, որ նրանց դեպի Մոսուլ են ուղարկելու: Երիտթուրքերի կառավարությունն անընդհատ ավելացող բռնությամբ նպատակադրվել է ավարտին հասցնել իր հայ նպատակների դեմ հայտարարված պատերազմը: Հայերով բնակեցված մահանգները, որոնք արդեն անկարագրելի ահաբեկչության էին ենթարկվել, բռնությամբ դատարկվել են...»:²⁵³

• Կոստանդնուպոլսից՝ Բուլղարական թագավորական դեսպանատան լիազոր-նախարար Ն. Կոլուշկը Էրզրումից սեփական թղթակիցներից ստացած տեղեկատվության հիման վրա, նախարարների խորհրդի նախագահ դոկտոր Վ. Ռադոսլավովին հունիսի 27-ին հղած N 451 գաղտնի զեկուցագրում գրում է, որ մայիսի 25-ին «...Երզնկայի, Քղիի և Բայբուրթի շրջանները դարձել են անմարդաբնակ՝ Էրզրումի հայ բնակչության բռնի տեղահանման պատճառով: Խիստ հրաման ստացվեց քաղաքը թողնելու մասին և 150 վաճառականներ իրենց ընտանիքներով արդեն ճանապարհին են: Կառավարությունը բռնագրավում է նրանց ապրանքներն՝ իբր պարտքի դիմաց: Տեղահանվածների մասին ոչ մի լուր չունենք: Ասում են, որ Մոսուլ պետք է ուղարկեն»:²⁵⁴

• Կոստանդնուպոլսից ԱՄՆ-ի դեսպան Մորգենթաուն իր խիստ գաղտնի տեղեկագրում (file no. 867.4016/71), անդրադառնալով թուրքական կառավարության՝ հայերի նկատմամբ վարած քաղաքականությանը, գրում է. «... Բանակում հայերի մեծ մասը, հույն զինվորների պես, զինաթափվել և օգտագործվում են ֆիզիկական աշխատանքներում: Այստեղ, ինչպես հասկանում են, մահապատժի սպառնալիքով բոլոր բնակիչները պարտավոր են հանձնելու իրենց զենքերը, սակայն այս նույն կանոնակարգը թույլատրում է մուսուլմաններին պահել զենքը: Վերջերս Բոսֆորի ոչ մուսուլմանների տարահանումը ծանր տառապանքներ է պատճառել այդ վերին աստիճանի խաղաղասեր համայնքին: Օր չի անցնում, որ մենք չլսենք նոր ճնշումների մասին... Մա մի իրադրություն է, որ այս պահին, երբ կասեցնող տարրերը սակավաթիվ են, կարող է բերել ամենալուրջ և տխուր հետևանքներին»:²⁵⁵

13/26 մայիսի

• Երիտթուրքերի կուսակցության դահլիճի քննարկմանն է ներկայացվում Թալեաթի մայիսի 22-ի տեղեկագիրը՝ հայերի տեղահանման ձևի ու ընթացքի, ինչպես նաև նրանց բնակավայրերի մուսուլմանական բնակչության վերաբնակեցման մասին:²⁵⁶

• Թուրքական կառավարությունը պաշտոնապես ընդունում է հայերի տեղահանության մասին որոշումը, չնայած այն վաղուց արդեն իրականացվում էր, և նույն օրն էլ Թալեաթը հրապարակում է հայերի տարագրության և նոր բնակավայրերում նրանց տեղավորելու մասին 15 հոդվածներից բաղկացած կանոնակարգը:²⁵⁷

• Կարիճում սկսվում են ձերբակալություններ, թուրք հրոսակներն ու զինվորները հարձակվում են շուկայի վրա, ավերում և թալանում են հայերի խանութները, ծեծում, դաշույներով ու սրերով խփում բոլոր նրանց, ովքեր փորձում էին փախչել:²⁵⁸

• Մերաստիայի նահանգի Շապին-Գարահիսարի գավառի Թամարգա գյուղաքաղաքում սկսվում են տեղահանությունները:²⁵⁹

• Հալեպից գերմանական հյուպատոս Ռյուպերը դեսպան Վանգենհայմին գրում է. «Լքիվ վստահելի աղբյուրներից իմացել եմ, որ Ադանայի նահանգի արևելյան մասից և Մարաշի գավառից աքսորված հայ ընտանիքների թիվը 2000 է (10000 հոգի) և աքսորը դեռ շարունակվում է...»: Տեղահանվածների մեջ էր նաև ամերիկյան քոլեջի տնօրինությունը:²⁶⁰

27 մայիսի

• Թուրքական կառավարությունը վավերացնում է հայերի տեղահանության մասին Թալեաթի հեղինակած ժամանակավոր օրենքը, որտեղ ասվում է. «Հաշվի առնելով, որ հայերը հակաօրինական գործողություններ են կատարում և բոլոր առիթներն օգտագործում են կառավարությանն անհանգստացնելու համար, որ նրանց մոտ գտնվել են արգելված զենքեր, ռումբեր և պայթուցիկ նյութեր՝ պատրաստված ապստամբելու նպատակով, որ նրանք Վանում մահմեդականներին սպանել և օգնել են ռուսական զորքերին, երբ կառավարությունը պատերազմի մեջ էր Անգլիայի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի դեմ և վերջապես վախճնալով, որ հայերն, ըստ իրենց սովորության, կարող են ապստամբության, խռովության և ըմբոստության դիմել, կառավարությունը որոշել է, որ բոլոր հայերը պետք է հավաքվեն և տեղափոխվեն Մոսուլի ու Սիրիայի նահանգներ՝ ընդ որում նրանց անձը, սեփականությունն ու պատիվը պաշտպանվեն: Տրվել են անհրաժեշտ հրամաններ նրանց տեղափոխման համար և որպեսզի նրանք մինչև պատերազմի վերջը մնան այդ շրջաններում»: Կառավարությունը միաժամանակ հանձնարարում է ներքին գործերի և ռազմական նախարարություններին անմիջապես սկսել այդ օրենքի կիրառումը:²⁶¹

• Առավոտյան թերթերում լույս են տեսնում Թուրքիայի ռազմական նախարար Էնվերի՝ հայերի տեղահանության մասին 8 հոդվածներից բաղկացած գաղտնի մի հրամանի առաջին, երկրորդ և վերջին հոդվածները, որի երկրորդ կետում նշված է. «Բանակի, անկախ խմբերի և զորաբաժինների հրամանատարները՝ զինվորական անհրաժեշտությունից ելնելով կամ լրտեսության ու դավաճանության դեպքում կարող են գյուղերի ու քաղաքների բնակչությանն առանձին կամ խմբովին տեղահանել ու այլ վայրեր

տեղափոխել»։ Իսկ մյուս հինգ հոդվածները վերաբերում էին հայերի ունեցվածքի կողոպուտին։

3-րդ հոդվածով հրահանգվում էր տարագրված հայերի տները հատկացնել թուրք սպաներին, վիրավոր կամ սպանված զինվորականների ընտանիքներին, այրիներին ու որբերին։ Իսկ 5-8-րդ հոդվածներով հայերի տներն ու սեփականությունը թույլատրվում էր տալ նաև երկրի այլ վայրերից այստեղ բերված թուրք զաղթականներին (մոհաջիրներին)։²⁶²

• Թուրք ոստիկանները պաշարում են Ուրֆայի մոտակա Ս. Սարգիս վանքը և ձերբակալում այնտեղ ապրող մի քանի մարդկանց, որոնք կասկածվում էին դաշնակցական լինելու մեջ։ Միաժամանակ ոստիկանները բռնագրավում—տանում են նաև շատ զրքեր ու զրություններ՝ իրենց այդ զրգոյշ արարքն արդարացնող ապացույցներ գտնելու համար։²⁶³

• Ամերիկայի միացյալ նահանգների դեսպան Մորգենթաուն տեղեկացնում է պետքարտուղար Բրայենին, որ Ջեյթունից և շրջակա բնակավայրերից շարունակվում է հայերի աքսորը դեպի Միջագետքի անապատներ։ Նրանց տներում բնակեցվում են թուրք մոհաջիրները։ «Թուրքերը կատարյալ մոլեգնության մեջ են, - գրում է դեսպանը և ավելացնում, - անհմարին է նկարագրել տեղահանված հայերի կրած տառապանքները։ Բռնությունը, դավաճանափոխությունը, կամանց ու աղջիկների բռնաբարությունները սովորական ու ամենօրյա երևույթ են»։²⁶⁴

28 մայիսի

• Մերսինի ամերիկյան հյուպատոս Է. Նաթանը գրում է դեսպան Մորգենթաունին. «Ադանայից տեղահանված մի քանի հարյուր հայ ընտանիքներ, երբ հասել են Տարսոն, տեղեկացվել են, որ կարող են վերադառնալ Ադանա։ Ադանայի կառավարիչ Հաքքի բեյը որոշել է հնարավորին չափ հետաձգել տեղահանությունը...»։

Հյուպատոսը նշում է նաև, որ տեղահանությունները պետք է սկսվեին Հաճնում ևս, բայց դեռ այդ ուղղությամբ ոչինչ չի կատարվել, մինչդեռ Դյոթթ-Յոլում ընդամենը մի քանի հայ ընտանիքներ են մնացել։²⁶⁵

• Մանազկերտի առաջնորդական փոխանորդ Հովհաննես քահանա Տեր-Ավետիսյանը կաթողիկոս Գևորգ Մուրեմյանին գրած նամակում մանրամասն նկարագրում է իրավիճակը բնակավայրերում՝ գյուղ առ գյուղ և նշում, որ Մանազկերտի 27 հայկական գյուղերի 1078 ընտանիքներից փրկվել են 15 հոգի, Խլաթի 24 հայկական գյուղերի 2150 ընտանիքներից՝ միայն 20 հոգի...²⁶⁶

29 մայիսի

• Գերմանիայի դեսպանատան աշխատակից Մորդմանը գրում է, որ նույն օրն ինքը Թալեաթին դրդել է «...մեղմացնել տեղահանության միջոցառումներն Էրզրումի հայերի, հատկապես կամանց ու երեխաների նկատմամբ, բայց նա հակաճառեց, որ հենց Էրզրումում հայերի մոտ գտել են ոչ միայն մեղադրական զրություններ, այլ զենքեր, ռումբեր և նման այլ բաներ, որ ծրագրված է եղել ռուսների առաջխաղացման դեպքում ապստամբություն սկսել և թիկունքից խփել թուրքերին։ Տեղահանության միջոցով հայերը կպահպանվեն վատթարագույնից, այսինքն՝ կոտորածից...»։²⁶⁷

30 մայիսի

• Բուլղարական թագավորական դեսպանատան լիազոր-նախարար Ն. Կոլուշևին Էրզրումից իրենց սեփական թղթակիցները հաղորդում են. «Հայերին կոտորելը վերջնականապես որոշված է: Ամեն ինչ արվում է բնակչությանը հուսահատության հասցնելու համար: 3-4 օր է, ինչ սկսվեց 1878թ. պատերազմի ժամանակից ռուսական մատուռ-հուշարձանի քանդումը, որը գտնվում է հայկական գերեզմանատանը: Քանդումը գլխավորում են ավազակախմբերն ու ոստիկանները: Փողոցներում ձերբակալված հայերը, առանց տարիքի ու սեռի խտրականության, բռնի տարվում են գերեզմանոց՝ մատուռը ավերելու համար: Նրանց վիրավորում և ծեծում են... Սպանություններ են կատարվում Խնուսում, որտեղից տեղահանված 200-300 հայերին կոտորելու են ճանապարհին: Ռազմական հրամանատարության կարգադրությամբ լքված գյուղերը թալանվում են: Բանակում ծառայող հայ զինվորներն ու զինվորական բժիշկները տեղահանված կամ սպանված են»:²⁶⁸

• Թուրքիայի նախարարների խորհուրդն ընդունում է տեղահանության մասին օրենք, որը բխում էր ներքին գործերի նախարարության մայիսի 13/26-ի՝ հայերին Մոսուլի շրջան, Տեր-Ջոր և Միրիայի ուրիշ բնակավայրեր վերաբնակեցնելու մասին թիվ 270 որոշումից:²⁶⁹

31 մայիսի

• Թալեաթը երկու հեռագիր է հղում կուսակալներին, որ հայերն իրենց նոր բնակավայրերում պետք է մնան՝ համաձայն համապատասխան կանոնադրության 8-րդ հոդվածի, մինչև պատերազմի վերջը և նրանց թողած կենդանիներից բանակի համար պիտանիները կարող են վերցվել բանակի կողմից՝ համապատասխան ստացականներով:²⁷⁰

• Վանից հյուպատոս Սպորտունին Պետրոգրադի Իտալիայի դեսպանին գեկուցում է. «Վանի իրադարձություններից շատ առաջ սկսվել էին հայկական գյուղերի կոտորածները, որոնց զոհ են գնացել 16000 հոգի: Հայ գյուղացիները, թեև զինված են եղել, բայց փոխանակ իրենց զենքով պաշտպանվելու, դա հանձնել են իշխանություններին՝ թույլ տալով, որ խեղդեն իրենց: Բոլոր այդ կոտորածները կատարվել են արտասովոր դաժանությամբ: Պատռել են փոքր տղաների փորերը, կանանց ու աղջիկներին մերկացրել և բշել են լեռները, ինչպես վայրի գազանների...»:

Այս Սպորտունին հաղորդում է թուրքերի անընդհատ հրետակոծության և հայերի կազմակերպված պաշտպանության մասին՝ շեշտելով, որ նույնիսկ «...Էրզրումից եկած գերմանացի սպայի ղեկավարած թուրքական զիշերային գրոհը այնպես հաղթականորեն ետ մղվեց, որ սպան պարտության հաջորդ օրը ևեթ մեկնեց Վանից: Թուրքերը կորցրին 60-70 հոգի...»:²⁷¹

• Տրապիզոնից ավստրոհունգարական հյուպատոսն արտաքին գործերի նախարար Բուրիանին գեկուցում է. «Մամսոնում ձերբակալված (մոտ 40) հայերից մեկը բանտում, ասում են, դաժան տանջանքների հետևանքով, մահացել է: Անյունը գիշերով հողին են հանձնել, ընտանիքի կողմից պահանջված դիակերձումը պաշտոնապես մերժվել է: Գերեզմանը հսկվելու է ոստիկանության կողմից և ժամանակ առ ժամանակ ողողվելու է կրաջրով:

Տնային խուզարկությունների ժամանակ զենք, ձեռքի մոնակներ, ինչպես նաև մի թնդանոթ է հայտնաբերվել:

Ձերբակալվածները նախապես դեպի Բաֆրա են տարվել»:²⁷²

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ¹ Զատեն Արքեպս. Պատրիարքական Յուշերս. վավերագիրներ և վկայություններ, Գահիրե, 1947 (Այսուհետև՝ Զատեն Արքեպս. Պատրիարքական Յուշերս...), էջ 84:
- ² Русские источники о геноциде армян в Османской Империи. 1915-1916 годы (Сворник документов и материалов). Выпуск I, Ереван, 1995, (Այսուհետև՝ Русские источники...), стр. 2. Газ. "Кавказское слово", N 1, 1 января 1915г.
- ³ Там же, стр. 6, Центральный государственный архив Республики Армения (Այսուհետև՝ ЦГА РА), коллекционный фонд, оп. 1. д. 200, л. 13.
- ⁴ Unites States Official Documents on the Armenian Genocide, Compiled and introduced by Ara Sarafian, Watertown, Massachusetts, 1994 (Այսուհետև՝ Sarafian A. US Official Documents...), vol. II, The Pheriperies, doc.75, pp. 135-140, U. S. State Department Record Group 59. 867. 4016/270: Լեոն Վարդան. Ժամանակագրություն հայկական տասնինգի, Պէրլթը (Այսուհետև՝ Լեոն Վարդան. Ժամանակագրություն...) 1975, էջ 29: James Bryce. The Threatment of Armenians in the Ottoman Empire, 1915-16, Beirut, 1972 (Այսուհետև՝ James Bryce. The Threatment of Armenians...), pp. 105, 119-150, 577-586.
- ⁵ Чалхушьян Г. Красная книга, Ростов на Дону, 1919, стр. 18: Ստեփան Պողոսյան, Կարո Պողոսյան. Հայկական Հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն, հատոր II, գիրք I (Հայկական հարցը 1908-1914 թվերին), Երևան, 2001 (Այսուհետև՝ Ստեփան Պողոսյան, Կարո Պողոսյան. Հայկական Հարցի...), էջ 546:
- ⁶ Русские источники..., стр. 3-4. Газ. "Кавказское слово", N 2, 3 января 1915г.
- ⁷ Там же, стр. 4. Газ. "Кавказ", N 3, 4 января 1915г.
- ⁸ Там же, стр. 4. Газ. "Кавказское слово", N 6, 9 января 1915г.
- ⁹ The Armenian Genocide, News Accounts From the American Press (1915-1922), editor Richard D. Kloian. Berkeley, California, USA, 1985. Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու (Դանբ. Մկրտիչ Ներսիսյան) Երևան, 1991, (Այսուհետև՝ Հայերի ցեղասպանության պատմությունից...), էջ 51 :
- ¹⁰ Լեոն Վարդան. Ժամանակագրություն..., էջ 29: Barby Henry. Au Paus de L'epouvante: L' Armenie martyre (Beyrouth, 1973) (Այսուհետև՝ Barby Henry. Au Paus de L'epouvante...), p. 240. Ա-Ղ. Մեծ դեպքերը Վասպուրականում, Երևան, 1917 (Այսուհետև՝ Ա-Ղ. Մեծ դեպքերը...), էջ 119:
- ¹¹ Русские источники..., стр. 5. Газ. "Кавказская мысль", 20 января 1915г.
- ¹² Հայերի ցեղասպանության պատմությունից..., էջ 51:
- ¹³ "Österreich-Armenien", 1872-1936 Faksimilesammlung diplomatischer Aktenstücke, Herausgegeben und eingeleitet von Mag. Dr. Artem Ohandjanian, Band I-XII, Ohandjanian Eigenverlag Wien, 1995 (Այսուհետև՝ "Österreich-Armenien"), Bd. VI, 1914-1915, s. 4497 (Wien, Haus-Hof und Staatsarchiv (HHStA), N 38).
- ¹⁴ Русские источники..., стр. 5-6. "Русские ведомости", N 19, 24/ I 1915г.
- ¹⁵ "Österreich-Armenien", Bd. VI, s. 4491, HHStA, Politisches Archiv (PA), N 50.
- ¹⁶ Լեփսիու Յոհաննես. Գաղտնի տեղեկագիր, հայ ժողովրդի ջարդերը, Երևան, 2003 (Այսուհետև՝ Լեփսիու Յ. Գաղտնի տեղեկագիր...), էջ 111-112:
- ¹⁷ Геноцид армян, ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарии. Сост. Ю. Барсегов, том I, Москва, 2002 (Այսուհետև՝ ГАОТОМС), Том I, стр. 233-234 (стенографический отчет, четвертый созыв, сессия III, заседание первое, 27 января, 1915г., стр. 12-22):
- ¹⁸ Wien, HHStA PA, N 9/P-A-K. Արտեմ Օհանջանյան. 1915 թվական, Անհերքելի վկայություններ (Ավստրիական վավերագրերը Հայոց ցեղասպանության մասին), Երևան, 1997 (Այսուհետև՝ Օհանջանյան Ա. 1915 թվական, Անհերքելի վկայություններ...), էջ 88:

- ¹⁹ Լորտ Պրայս. Հայկական ջարդերու փաստաթուղթերը, Ա մաս, Կ. Պոլիս, 1920 (Այսուհետև՝ Լորտ Պրայս. Հայկական ջարդերու...), էջ 128:
- ²⁰ ГАОТОМС, том I, стр. 237, (стенографический отчет, 29 января, 1915г., стр. 285-287).
- ²¹ Deutschland und Armenien, 1914-1918, Sammlung Diplomatischer Aktenstücke, Herausgegeben und Eingeleitet von Dr. Johannes Lepsius, Mit Einem Vorwort Zur Neuausgabe von Tessa Hofmann und einem Nachwort von M. Rainer Lepsius, Bremen, 1986, s. 29, N 15 (Այսուհետև՝ Deutschland und Armenien).
- ²² U. S. State Department Record Group 59, 867. 00/739, Sarafian A. US Official Documents..., v. II, The Pheriperies, doc. 61, p. 103.
- ²³ Վեր. Կտրկիզեան Արսեն Ա. Վասպուրականի հերոսամարտը (1915 ապրիլ 7-1915 մայիսի 7), Պեյրուք, էջ 52:
- ²⁴ Русские источники..., стр. 7. "Русские Ведомости", 10 февраля, 1915г.
- ²⁵ Հովհ. Արք. Նազիեան. Յուշեր (Մերձավոր Արեւելքի 1914-1928 շրջանի քաղաքական-կրօնական դեպքերուն մասին), Հ. Ա. Պէյրուք, 1960, (Այսուհետև՝ Նազիեան Յ. Յուշեր...), էջ 655: Գարակեօզեան Սեդրաք. Յիշատակարան Էվերէկ-Յէնէսէի, Փարիզ, 1963, էջ 584-585:
- ²⁶ Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 29-30: Հայկազ Դազարեան. Յեղասպան թուրքը, Պեյրուք, 1968 (Այսուհետև՝ Հ. Դազարյան. Յեղասպան թուրքը...), էջ 21-22, 93-103 և 183-186: Նազիեան Յ. Յուշեր..., էջ 56-57 և 563: Սեպրուհեան Գ. Յուշամատեան Մեծ Եղեռնի, Պեյրուք, 1965 (Այսուհետև՝ Սեպրուհեան Գ. Յուշամատեան...), էջ 189: Զատեն Արքեպս. Պատրիարքական Յուշերս..., էջ 51-52: Տաշեան Յ. Հայ Ազգի Տարագրութիւնը գերմանական վաւերագիրներու համեմատ, Վիեննա, 1921 (Այսուհետև՝ Տաշեան Յ. Հայ Ազգի Տարագրութիւնը...), էջ 163-164: Անտոնեան Ա. Մեծ Ոճիրը, Պեյրուք, 1965 (Այսուհետև՝ Անտոնեան...), էջ 209-219: Լեւոն Վարդան. «Հայկական Եղեռնին առաջ», «Շիրակ», Թ Տարի, թիվ 4-5, Ապրիլ-Մայիս, 1965, էջ 170-195, Գեորգ Մետրոպ (խմբ.), Հայկաշէն Տարեգիրք, Ա Տարի, Պոլիս, 1922, էջ 108-110: Միլմենեան Գ. Տաճկահայ Զինուոր եւ Զինուորականութիւնը. Պեյրուք, 1967, էջ 23-39: «Հայաստան» (Սոֆիա), 14 մարտ 1915թ., էջ 3 և H. Morgenthau. Ambassador Morgenthau's Story. New York. 1918. pp. 295, 301-303.
- ²⁷ Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 30: Հիշատակագիր Վանի հայ երեսփոխան Վոսմյանի, «Հայաստան» (Սոֆիա), 7 մարտ 1915թ., էջ 2-3, տե՛ս Barby Henry. Au Paus de L'epouvante..., pp. 241-247.
- ²⁸ Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 30: Ժողովի մպնրամասնությունների առնչությամբ տե՛ս Անտոնեան..., էջ 187-188: Սեպուհ Ակունի. Միլիոն մը Հայերու ջարդի Պատմութիւնը, Կ. Պոլիս, 1921 (Այսուհետև՝ Սեպուհ Ակունի. Միլիոն մը Հայերու...), էջ 27-28: *Երեքի Գործադիր Կոմիտեն քաղկացած էր կրթության նախարար Եյուքրի, Նազրմ և Բեհաեդդին Շաքիր փաշաներից: Առաջին նիստի արձանագրության վերաբերյալ տե՛ս Հ. Դազարյան. Յեղասպան թուրքը...*, էջ 34-35 և 40-47 և Բիֆաթ Մեվլան Զատե. Օսմանեան Յեղափոխութեան Մութ Ծայրերը, Պեյրուք, 1938 (Այսուհետև՝ Ռիֆաթ Մեվլան Զադէ. Օսմանեան Յեղափոխութեան...), էջ 112-118:
- ²⁹ Տաշեան Յ. Հայ Ազգի Տարագրութիւնը..., էջ 50-51: Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 30: Սեպուհ Ակունի. Միլիոն մը Հայերու..., էջ 295:
- ³⁰ Русские источники..., стр. 9-10. ЦГАРА документов общественно-политических организаций. ф. 47/2. П 2, д 2. д. 1.
- ³¹ Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 30-31: Բեհաեդդին Շաքիրի նամակի կապակցությամբ տե՛ս Անտոնեան Ա. Մեծ Ոճիրը..., էջ 87-88: Հ. Դազարեան Յեղասպան թուրքը..., էջ 178-179:

- ³² USA Department of State, Foreign Relations of the United States: 1915, Supplement (Washington, 1928) p. 979 (Այսուհետև՝ Supplement – 1915). Լեոն Վարդան. Ժամանակագրություն..., էջ 34: Անտոնյան Ա. Մեծ ոճիրը..., էջ 135-139:
- ³³ Հայերի ցեղասպանության պատմությունից..., էջ 52:
- ³⁴ Լեոն Վարդան. Ժամանակագրություն..., էջ 31: Մեպոս Ակունի. Միլիոն մը Հայեր..., էջ 140:
- ³⁵ Լեոն Վարդան. Ժամանակագրություն..., էջ 31: Supplement-1915, pp. 979-980: Լեփսիուս Յ. Գաղտնի տեղեկագիր..., էջ 133:
- ³⁶ Deutschland und Armenien, s. 30, N 16.
- ³⁷ Lepsius Yohannes. Der Todesgang des armenischen volkes, Heidelberg, 1980 (Այսուհետև՝ Lepsius Yohannes. Der Todesgang...), s. 162. Օհանջանյան Ա. 1915 թվական, Անհերքելի վկայություններ..., էջ 88:
